ISSN 1829-0531

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԹՈՂԱՐԿՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2022

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Ռ. Գևորգյան (նախագահ),

Մ. Գ. Գիլավյան **(գլխավոր խմբագիր)**,
Ա. Վ. Գալստյան, Ս. Դ. Դանիելյան, Ա. Գ. Դոլուխանյան,
Լ. Մ. Խաչատրյան, Ա. Հ. Հակոբյան, Վ. Գ. Համբարձումյան,
Ա. Ա. Մակարյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,
Ա. Տագեսյան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Իտալիա),
Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Ա. Հ. Հարությունյան **(գլխավոր խմբագրի տեղակալ)**

Գրանցման վկայական՝ 211.200.00182
Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003 թ.
Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Հոդվածները տպագրվում են անվճար: Ցանկացողները հանդեսը կարող են ձեռք բերել համալսարանի հաշվեհամարին (151 000 230 84 80 100) փոխանցելով համարի արժեքը:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-20)
Էլեկտրոնային փոստ՝ **hayagitakanhandes@gmail.com**
Կայքէջ՝ www.hayagitakan-handes.com

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՐՀՆԵՐԳԸ

Խոսք՝ ***Մարտին Գիլավյանի***
Երաժշտ.՝ ***Արկադի Շեկունցի***

Ճամփան ես մեր լուսավորում
Դու Մաշտոցի արդար լույսով,
Ու լցնում ես սրտերը մեր
Հավատով ու պայծառ հույսով:

Կրկներգ

Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր:

Ճանապարհը քո փառավոր
Շարունակվի թող հավիտյան,
Կանաչ լինի ու լուսավոր
Մեր հարազատ Համալսարան:

Կրկներգ

Դու մայր տաճար մեր դպրության,
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր,
Աբովյանից մինչ այսօր:

Ցավալի զուգադիպությամբ մանկավարժական համալսարանի հարյուրամյակը լրացավ երկրի համար ծանր ժամանակներում, երբ դժվարին մարտահրավերները նոր խնդիրներ են առաջադրում նաև կրթության ու գիտության օջախներին:

Այս ծանր շրջանում հայրենիքի պաշտպանության համար զոհվեցին մեր լավագույն ուսանողներից ու շրջանավարտներից շատերը, ավելի ճիշտ՝ հերոսացան ու անմահացան: Փառք ու պատիվ նրանց ու մեր խոնարհումը նրանց շիրիմներին:

Բայց կյանքը շարունակվում է, և մանկավարժական համալսարանը շարունակում է իր երթը նոր կարգախոսով՝ ավելի եռանդուն ջանքերով է սովորեցնում սովորեցնել: Այս կարգախոսով է համալսարանը դաստիարակում տարբեր մասնագիտությամբ շրջանավարտների, ովքեր մոտ ապագայում լրացնելու են հանրապետության, Արցախի և Սփյուռքի ուսուցիչների շարքերը:

Հրաշալի սերունդ է կրթություն ստանում մանկավարժականում, բարեկիրթ, ուսուցչի դժվարին, բայց պատվաբեր մասնագիտությունը սիրով ընտրած սերունդ, որն իր հետ դպրոց է տանելու ինչպես Մեծ Լուսավորչի պայծառ լույսը, այնպես էլ համալսարանում ստացած հարուստ գիտելիքները:

«Հայագիտական հանդեսի» խմբագրական խորհուրդը, ամսագրում տպագրվող բոլոր հեղինակները շնորհավորում են 100-ամյա հոբելյանդ, սիրելի՛ համալսարան, ու վստահ են, որ հաջորդ հարյուրամյակ մուտք ես գործելու վստահ քայլերով ու ավելի բարձր նպատակներով:

Ի խորոց սրտի՝ «Հայագիտական հանդեսի» խմբագրություն

ՄՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր,
Հոգեբ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԵԿԴԱՐՅԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ԸՆԴԱՌԱՋ

Հազարամյա հայոց պատմության ընթացքում՝ մեր ժողովրդի գոյապայքարի օրհասական պահերին, հաճախ են վտանգվել մեր ազգային նկարագիրը, ամրոցների դեր կատարող դպրոցները և մեր ինքնության վկայագիր մայրենին: Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործընթացները ազգապահպան նպատակներին ուղղորդելու մեր ժողովրդի մեծագույն կամքի ու ջանքի շնորհիվ, մաշտոցյան գրերի բացած լույսի արահետով դիմակայել ենք բոլոր փորձություններին:

Բոլոր ժամանակներում չարի դեմ մեր զենքը եղել է դպրությունը, հենց դպրության լույսն է մեզ ճանաչելի դարձրել, և այդ լույսով ենք առաջնորդվում նաև այսօր:

Հայ կրթամշակութային հարուստ պատմության մեջ յուրահատուկ դեր է վերապահված ուսուցիչներ պատրաստող բարձրագույն ուսումնական հաստատությանը՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին, որն այսօր արդեն հատել է իր գոյության մեկդարյա սահմանագիծը: Հոբելյան, որը կերտել են մանկավարժական գործի նվիրյալ բազմաթիվ երախտավորներ՝ իրենց անունն ու հետագիծը թողնելով համալսարանի 100-ամյա տարեգրության մեջ: Յուրաքանչյուր սերունդ ուսուցիչների պատրաստման առաքելության մեջ իր յուրահատուկ ձեռագիրն է թողնում, գիտակրթական գործի հանդեպ իր ջերմությունն ու սերը փոխանցում նոր սերնդին՝ նրան դարձնելով կրթության լույսի նոր ժամանակների ջահակիր:

21-րդ դարի ուսուցիչն այլ նկարագիր ունի. ժամանակակից տեխնոլոգիաների դարն աննախադեպ պահանջներ է դնում նրա առաջ՝ սովորեցնել սովորել, համընթաց քայլել համաշխարհային զարգացման միտումներին, երկրի համար ռազմավարական նշանակություն ունեցող կրթության գործը բարձրացնել նոր որակական աստիճանի:

Իր 100-ամյակի շեմին Մանկավարժական համալսարանը պատվով է կրում կրթության մեծ ջատագով ու լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անունը, ամրագրում հրաշալի ավանդույթներ, որոնցով առաջ է տանում գիտակրթական գործունեությունը, հայ ուսուցչի նոր կերպարի կերտման իր մոտեցումները ձևավորում ժամանակակից աշխարհի գիտակրթական գործընթացների համատեքստում: Միաժամանակ հայ ուսուցչի ազգային նկարագրի պահպանումն անվտանգության խնդիր է, որի համար անչափ կարևոր գործունեություն է իրականացնում «Հայագիտական հանդեսը», քանզի հայ ուսուցչի աշխատանքով է մեծապես պայմանավորված Հայաստանի ներկան ու բարեկեցիկ ապագայի հետ կապված մեր ստեղծագործ իղձերի իրականացումը:

Շնորհավոր 100-ամյակդ, սիրելի Մանկավարժական համալսարան: Թող քո հարազատ հարկի ներքո հարատևի ուսուցչական սերունդների երթը:

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
ուսումնագիտական գծով պրոռեկտոր
Մանկ. գիտ. թեկն., դոցենտ

ԲԱՐԻ ԵՐԹ ՔՈ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի համար տարին հոբելյանական է:

Մեկդարյա համալսարանի տարեգրությունը կերտել են դասախոսների և ուսանողների տարբեր սերունդներ. նրանցից յուրաքանչյուրն իր նվիրական էջն է գրել այդ տարեգրության մեջ, արձանագրել ժամանակի այն ընթացքը, որին համընթաց քայլել է հարազատ բուհի հետ՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, նաև ուրախանալով նրա հաջողություններով:

Մեծ մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը կրող համալսարանը մանկավարժների պատրաստման հրաշալի ավանդույթներ ունեցող այն բարձրագույն կրթօջախն է, որի դռները ուսումնառությունից տարիներ հետո էլ ակնածանքով ու հպարտությամբ է բացում յուրաքանչյուր շրջանավարտ: Այդ հետադարձ կապի մեջ շրջանավարտների անասելի ջերմություն ու սեր կա ուսուցանողների, նվիրում ու խոնարհում՝ մանկավարժական բարձրագույն հաստատության հանդեպ:

Յուրաքանչյուրը, ով ոտք է դրել այս բարձրագույն կրթօջախի շեմից ներս, իր փոքր ներդրումն է բերել սիրելի համալսարանի զարգացմանն ու առաջընթացին, որը տարիների հետ ամբողջացել է՝ այսօր արդեն ներկայանալով որպես մեկդարյա պատմություն:

Այսօր ես հպարտորեն կարող եմ ասել, որ այս բուհի շրջանավարտն եմ, բուհ, որտեղ ամբարել եմ մասնագիտական

կարողություններ ու հմտություններ, և որի հետ շարունակում եմ ճանապարհ անցնել՝ ձեռք բերելով աշխատանքային կենսափորձ, մարդկային շփումների նոր որակներ, որոնք ինձ օգնում են արժևորել համալսարանում ստացած գիտելիքներս և դրանք կիրառել յուրաքանչյուր օր: համալսարանն ինձ համար շարունակում է մնալ որպես գիտակրթական ձեռքբերումների մի ճանապարհ, որի յուրաքանչյուր քայլի հետ անընդհատ ձգտում եմ գնալ նորին ընդառաջ:

ՈՒրախ եմ, որ 100-ամյա համալսարանի պատմության մի մասնիկն էլ ես եմ, ով ամեն օր սիրով ու հպարտությամբ է ներս մտնում մանկավարժական համալսարան, որտեղ կրթություն եմ ստացել, շփվել հրաշալի դասախոսների հետ, ձեռք բերել լավ ընկերներ:

Գաղտնիք չէ, որ մարդն իրեն բավարարված է զգում, երբ ունի լավ մասնագիտություն, որը սիրում է, ինչպես նաև հետաքրքիր աշխատանքանքային միջավայր, որտեղ անցկացրած ամեն օրը նորին ու ավելի լավին ձգտելու, փորձառության նոր ասպարեզ է բացում՝ յուրահատուկ ջանքի մեջ դնելով այն սերը, որ տածում ես հարազատ համալսարանիդ հանդեպ:

Մերօրյա անհանգիստ տագնապների մեջ երբեմն առավել քան դժվար է տարբեր հարցերի լուծումներ գտնել, կայացնել ճիշտ որոշումներ, լինել աշխատանքային ընկերոջ կողքին, հասկանալ ուսանողին, մարդկային հարաբերություններում լինել անկողմնակալ… բայց այդ ամենը հաղթահարելի են, եթե ունես կամք, որն օգնում է ճիշտ դրսևորել ներուժդ՝ ի նպաստ սիրելի համալսարանի:

Շնորհավո՛ր հոբելյանդ, մեր 100-ամյա մանկավարժական համալսարան: վստահ եմ, որ ապագա սերունդները նոր ու գեղեցիկ էջերով կհարստացնեն քո պատմությունը, պատմություն, որը երբեք չի հնանում, այլ ժամանակի մեջ և ժամանակի հետ անընդհատ նորանում է՝ յուրաքանչյուրին ուղեկցելով դեպի իր երազանքի հանգրվանը:

Բարի երթ քո լուսավոր առաքելությանը:

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Վ. Պարտիզունու անվան հայ նոր և
նորագույն գրականության ամբիոն
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
«Հայագիտական հանդեսի» գլխավոր խմբագիր

ԱՊՐԱԾ ՕՐԵՐԸ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՀՈՒՇԵՐ ՈՒ ՉԵՆ ՄՈՌԱՑՎՈՒՄ

Աշխարհում միայն մանկավարժները, բժիշկներն ու զինվորականներն են երդվում՝ հավատարիմ մնալ իրենց կոչմանն ու առաքելությանը: Ես մանկավարժ եմ և երդման իմ խոսքն ասել եմ հեռավոր 1965-ին Մեծ լուսավորչի տուն-թանգարանում:

Այժմ ես ցանկանում եմ թերթել իմ հուշերի մատյանը, որի կետերից շատերը լրացված են 100-ամյա մանկավարժական մայր բուհում ավելի քան կեսդարյա հիշողություններով...

Ինչու՞ ընտրեցի մանկավարժականը և հատկապես բանասիրական ֆակուլտետը:

Ավարտել եմ Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ դպրոցը, որտեղ «Գրականություն» առարկայի հիանալի ուսուցիչներ էին դասավանդում՝ Ռ. Հովսեփյան, Ա. Շեգունց:

Գրականության դասերն ինձ համար իսկական տոնակատարություններ էին, անմոռանալի ճամփորդություններ բարության ու սիրո մոլորակի ճանապարհներով, Ե. Չարենցի Պատմության քառուղիներով, Ա. Բակունցի Մթնաձորով, Հ. Սահյանի Որոտանի կիրճով...

1965-ին՝ ազգային զարթոնքի ու գրականության նոր վերելքի տարում, ընդունվեցի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, որտեղ, բառի բուն իմաստով, գիտության կենդանի լեգենդներ էին դասավանդում՝ Աշոտ

Աբրահամյան, Առաքել Առաքելյան, Վաչե Պարտիզունի, Պարույր Սահակյան, Արշալույս Բաբայան, Վաղարշակ Քոսյան, Բոգդան Վերդյան:

Նրանք միայն չէին դասավանդում, այլ սովորեցնում էին սիրել հայոց լեզուն և գրականությունն ընդհանրապես, սովորեցնում էին ճիշտ ապրել, հաղթահարել դասագրքային կաղապարները և ունենալ սեփական տեսակետ ու կարծիք: Թող որ դրանք նաև խնդրահարույց, նույնիսկ՝ ճիշտ չլինեին: Հիշում եմ այսպիսի մի դեպք. կուրսը քննություն էր հանձնում Վաչե Պարտիզունու մոտ: Ուսանողներից մեկը խնդրեց փոխել հարցատոմսը, որովհետև վեպերից մեկը չէր կարդացել: Պրոֆեսորը վերցրեց հարցատոմսն ու ասաց. «Իսկ Ռաֆֆու ո՞ր ստեղծագործությունն ես կարդացել»: Ուսանողը սկսեց խոսել «Խենթի» մասին: Պրոֆեսորի ժպիտն աստիճանաբար ողողում էր նրա ամբողջ դեմքը՝ «Ապրես, գերազանց», բայց «Կայծերն» անպայման կկարդաս:

Մի ուրիշ դեպք ևս. ընդունելության քննությունների ժամանակ դիմորդներից մեկը, որ հետագայում ճանաչված բանաստեղծ դարձավ, ազատ շարադրության մեջ ուղղագրական և կետադրական սխալներ էր արել: Գրավորը ստուգող դասախոսը նախագահին առաջարկեց նշանակել «անբավարար»: Նախագահը երջանկահիշատակ Աշոտ Աբրահամյանն էր. գրավորը ուշադիր կարդաց, հետո նորից կարդաց և առաջարկեց բարձր գնահատական՝ «Հրաշալի պատկերամտածողություն ունի դիմորդը, ուղղագրությունն ու կետադրությունն ընթացքում կսովորի, չեմ կասկածում»: Ուսանողը Արմեն Շեկոյանն էր՝ ճանաչված բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս:

Մեզ ճիշտ ապրել ու գրականությունը սիրել էին սովորեցնում նաև տոհմիկ ազնվականության վերջին ներկայացուցիչներից մեկը՝ հունահռոմեական գրականության դասախոս Առաքել Առաքելյանն ու գրականության տեսության և ռուս

գրականության դասախոս Պարույր Սահակյանը, ովքեր քննությունների ժամանակ առարկայի իմացությունից, թերևս, առավել գնահատում էին գեղարվեստական երկն ընթերցելու (ոչ թե քննություն հանձնելու համար կարդալու) ուսանողի ունակությունները:

Հիշարժան են նաև գրողների հետ հանդիպումները: Մեզ հաճախ էին հյուր գալիս Համո Սահյանը, Սերո Խանզադյանը, Պարույր Սևակը, Գևորգ Էմինը: Ֆակուլտետի դեկան Պարույր Սահակյանի և գրականության ամբիոնի վարիչ Վաչե Պարտիզունու բացման խոսքից հետո ուսանողներն էին ելույթներ ունենում, գնահատում գրողների ստեղծագործությունները, անդրադառնում դրանց պատկերաստեղծման ու կերպարակերտման յուրահատկություններին: Միով բանիվ՝ հասունանում էր գրականագետների ու լեզվաբանների նոր սերունդ, որոնց մեջ այժմ ունենք ճանաչված գրականագետներ, լեզվաբաներ՝ Սուրեն Դանիելյան, Լալիկ Խաչատրյան:

Գրողների հետ հանդիպումները ապագայի համար օգտակար դասեր քաղելու հնարավորություններ էին ընձեռում ուսանողներին: Այդ ավանդույթը շարունակվում է մինչև հիմա. տասնամյակների ընթացքում տասնյակ հանդիպումներ են կազմակերպվել համալսարանի շրջանավարտ գրողներ Հրանտ Մաթևոսյանի, Ռազմիկ Դավոյանի, Արամայիս Սահակյանի, Սուրեն Մուրադյանի, Երվանդ Պետրոսյանի և ուրիշների հետ, որոնք նաև տարբեր կուրսերում դասախոսություններ, վարպետաց դասեր են անցկացրել:

Հիմա, երբ թերթում եմ հուշերիս մատյանը, համալսարանում (այն ժամանակ՝ ինստիտուտում) անցկացրած իմ օրերն են հերթով անցնում հիշողություններս ծիրում: Ապրած օրեր էին դրանց մեծ մասը, որոնք չեն մոռացվելու:

Հ. Գ. 100-ամյա ծնունդդ շնորհավոր, իմ հարազատ համալսարան, իմ երկրորդ տուն: 100-ը միայն թվով չէ, այլ անդուլ մաքառում, մարտահրավերների հաղթահարում,

նվաճումների ու ձեռքբերումների հրճվանք ու վայելք ու ... ցավոք սրտի, նաև կորուստների ցավ ու կսկիծ:

Քո ձեռքբերումները թող շարունակվեն էլի հարյուրամյակներ, քո կորուստները թող վերջինը լինեն:

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետի դեկան
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀՕԳՈՒՏ ՈՒՍԱՆՈՂԻ

ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետում աշխատում է պրոֆեսորադասախոսական ամուր թիմ: Երեք ամբիոններում աշխատում է 34 դասախոս: Գիտության դոկտորներ են և գիտության թեկնածուներ: Գովարժան են նաև այլ ամբիոններից եկած դասախոսները: Նրանք կարծես մերվել են մեր թիմին. արհեստավարժ մանկավարժներ են, շատ գիտակ են և հետաքրքիր են անցկացնում դասաժամերը:

Բանասիրական ֆակուլտետը մեր երկրորդ տունն է: Մի նավի մեջ ենք, որտեղ ապրում են բանիմաց գործընկերներ և բարեջան ուսանողներ: Հետաքրքիր է անցնում ֆակուլտետի առօրյան: Մանկավարժական վարպետություն, դասախոսություններ, ամբիոնի նիստեր, տարաբնույթ միջոցառումներ...

Մենք հաճախ ենք լինում հանրապետության տարբեր դպրոցներում, կրթական կենտրոններում: Այցելություններն այս տարի կարծեք կրկնապատկվել են: Ռեկտորը տարին հայտարարել է 365 օր դպրոցում և աշակերտի կողքին: «Ֆակուլտետը՝ դպրոցին» նշանաբանը մեր այցեքարտն է:

Մեծ տեղ ենք տալիս կիրառական պրակտիկային: Դպրոցներ մեկնելուց առաջ ֆակուլտետում տեղի է ունենում նախապատրաստական կոնֆերանս: Ուսանողները գիտեն, որ պրակտիկայի ընթացքում իրենց դիտում են մանկավարժական հանրությունը, կրթության փորձագետները, ծնողները: Պետք է գործել և արարել չափի ու պատասխանատվության տիրույթում:

Դպրոցներում իրազեկման աշխատանքներ կատարելիս մեզ հետ տանում ենք նաև ուսանողներին: Արթիկի տարածաշրջանում մեզ հետ էին նաև այդ բնակավայրերի ուսանողները, որոնք սովորում են բանասիրականում: Նրանք են աշակերտներին ներկայացնում 100-ամյա Մանկավարժական համալսարանը, նրա առավելությունները: Նրանք են աշակերտական համայնքին փոխանցում իրենց տպավորությունները:

Բաց դռների օրերի շրջանակներում հաճախ ենք ֆակուլտետում հյուրընկալում տարբեր դպրոցների աշակերտներին և ուսուցիչներին: Մինչ նրանց գալը մենք ֆակուլտետում նախապատրաստվում ենք. ուսումնասիրում ենք նաև նրանց կարիքները: Սա շատ կարևոր է: Ի՞նչ հետաքրքիր միջոցառումներ, ֆլեշ-մոբեր, վարպետության դասեր, օլիմպիադաներ կարելի է ներկայացնել մեր հյուրերին: Սրանք պլանավորվում են մեր թիմի կողմից: Առաջարկություններ է ներկայացնում նաև ուսխորհուրդը:

Շատ հարթակներում մեր ուսանողները մրցում են այլ բուհերի ուսանողների հետ և առավելություններ արձանագրում բանասիրության և մանկավարժության բնագավառներում: Սա շատ գովելի է: Թերևս դա է պատժառը, որ այս տարի շատ դիմորդներ ունենք:

Ցանկալի է, որ բանասիրական գան նաև տղաներ: Իհարկե, ունենք տղա ուսանողներ և՛ բակալավրիտում, և՛ մագիստրատուրայում: Բայց դրանց թիվը քիչ է:

Նվիրում և պարտաճանաչություն. սա է բանասիրականի նշանաբանը: Շատ ենք աշխատում: Փորձում ենք հասցնել բոլոր հանձնարարականները: Ուսանողին դիտում ենք որպես կրտսեր գործընկեր: Նրան վստահում ենք և հավատում:

Այսօրվա ուսանողը տարբերվում է և՛ գործելակերպով, և՛ աշխարհայացքով: Փորձում ենք հասկանալ նրան, օգնել, աջակցել: Ունենում ենք նաև դժվարություններ: Տարբեր

ընտանիքներից և դպրոցներից եկած երիտասարդներ են: Յուրաքանչյուրի հետ անհատական մոտեցում է անհրաժեշտ:

Կարծում եմ, որ մեր մասնագիտության գծով լավագույնը դառնալու համար պիտի շատ աշխատել: Իսկ դա տարիներ է պահանջում: Տքնանք և նկարագրի կերտում: Նաև անբասիր կենսագրություն և հեղինակության ստեղծում: Ես չեմ կարծում, որ 35-40 տարեկանը կարող է լինել այս մասնագիտության առաջամարտիկը: Մեր ամբոնների վարիչները, պրոֆեսորները հեղինակություններ են, և այդ ամենը նրանք ձեռք են բերել տարիների տքնաջան և անձանձիր գործունեության ընթացքում:

Հետամուտ ենք և շահագրգիռ երտասարդ կադրերի հարցում: Այսօր ամբիոններում պատրաստվում են երիտասարդ ասպիրանտներ, որոնք մոտ ապագայում կհամալրեն դասախոսական շարքերը: Մենք վստահում ենք երիտասարդներին: Դեկանատում աշխատում են ֆակուլտետի երիտասարդ շրջանավարտները: Ավագներն իրենց փորձը սիրով փոխանցում են երիտասարդներին:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ
ՀՀ Լեզվի կոմիտեի նախագահ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ ԵՎ ԵՍ. ՀՈՒՇԱԴՐՎԱԳՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ԴՐՎԱԳ

Հեռավոր 1980 թվականի ամառն էր։ Ոսկե մեդալով ավարտել էի դպրոցը։ Գործերս հանձնեցի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետ։ Երբ մի քանի օր անց գնացի քննության օրերն իմանալու, աշխատակիցն ասաց, որ պատասխանատուներից մեկն ուզում է տեսնել ոսկե մեդալակիր դիմորդին։ Հետո իմացա, որ պրոֆեսոր Վաղարշակ Քոսյանն էր, ֆակուլտետի այդ ժամանակվա դեկանը։ Սկսեց հարցուփորձ անել ու թե՝ «Մի բանաստեղծությո՛ւն ասա»։ Քուչակի հայրեններից մեկն ասացի։ Հիմա եմ հասկանում, որ բնագրից ելնելով՝ լեզվական հարցեր էր ուզում տալ, իսկ ես միջին հայերենով ստեղծված հայրեն եմ արտասանում։ Ուզած-չուզած հարցնում է՝ զմեռնելն ի՞նչ ձև է, զ-ն ի՞նչ է և այլն։ Պատասխանում եմ անվարան և անսխալ։ Զարմացավ. «Ա՛յ տղա, գլուխդ լավ է աշխատում, որտեղի՞ց գիտես»։ Ասացի, որ լավ ուսուցիչներ եմ ունեցել։ Վերջում ավելացրեց. «Քննությանը դժվարության հանդիպես, դիմի՛ր ինձ»։

Գրավոր քննությանը ազատ թեմայով շարադրություն ընտրեցի, թեման՝ «Ինձ դյութում է այս երաժշտությունը»։ Չարչարվեցի, սիրուն մի բան գրեցի Ա. Խաչատրյանի «Գայանե» բալետի և իմ հույզերի ու զգացմունքների մասին։ Մի երկու անգամ ստուգելուց հետո, երբ համոզվեցի, որ ամեն ինչ ճիշտ է, հանձնեցի աշխատանքս։

Գնահատականս 4 էր, «լավ», իսկ մեկ քննությամբ ընդունվելու համար «գերազանց» պիտի ստանայի։ Բողոքար-

կեցի գնահատականը։ Բողոքն ընդունում էր այդ նույն մարդը՝ պրոֆ. Քոսյանը։ Հենց սկզբից ասաց, որ ինձ լավ է հիշում և սկսեց կարդալ։ «Ա՛յ տղա, մարգարիտներ ես շարել», - գլուխը մի պահ կտրեց գրավորից։ Ես դիմացը նստած էի և տեսա, որ կարմիր գրիչով նշումներ չկան, միայն մի տեղ օժանդակ բայի տակ ալիքաձև գծիկ էր դրված. ոճական սխալ էր համարվել, իբր երկու բայաձևերն էլ ունեն օժանդակ բայ, մեկը չպիտի լիներ (մոտավորապես այսպիսի բան էր՝ երաժշտությունը ծավալվում է, ահագնանում է...)։ Վ. Քոսյանը սկսեց երկրորդ անգամ կարդալ, թերթում է գրավորս, բան չի ասում։ Վերջապես ասաց. «Շարունակի՛ր քննությունները, հաստատ կընդունվես»։ Համարձակություն ունեցա ասելու, որ համալսարանում այդպես համոզել են ինձ, և ես չորս հատ չորսով չեմ ընդունվել պատմության ֆակուլտետ (անծանոթ-ներին հինգ չէին դնում. այդպիսի ժամանակներ էին), չեմ ուզում, որ նույնն այստեղ լինի։ Մարդն ընկավ մտքերի մեջ. բարդ գործ էր։ Արդեն երեկո էր...

Ի վերջո կանչեց աշխատակիցներից մեկին և խնդրեց գրավորը հանձնել Աբրահամյանին (հետո իմացա, որ նշանավոր գրաբարագետ, պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանն էր, հանձնաժողովի նախագահը)։ Ասացին, թե նա հոգնած է, դժվար թե կարդա (տեսողության խնդիր ուներ պրոֆեսորը)։ Վ. Քոսյանն ասաց. «Ասե՛ք, որ ես եմ խնդրում»։ Տարան։ Ժամանակը դանդաղ էր անցնում, ես հույսով սպասում էի...

Հետո ինձ տարան Ա. Աբրահամյանի սենյակը։ Մտա, պատկառելի մի գիտնական էր նստած, ուշադիր նայեց ինձ, մի երկու թեթև հարց տվեց, ես դուրս եկա։ Կրկին սպասում եմ, մեկ էլ պատասխանատու քարտուղարը եկավ և հայտարարեց, որ գնահատականս փոխում են, «գերազանց»։ Ներկաները զարմացած էի, ես ուրախ էի... Մեկ քննությամբ ընդունվեցի։

Սեպտեմբերին բոլորը գիտեին, որ մեկն ընդունվել է ոսկե մեդալով, և նա ... Ա. Աբրահամյանի ու Վ. Քոսյանի ծանոթն է

(կամ բարեկամը. ըստ ուսանողական բանահյուսության՝ մեկը քեռիս էր, մյուսը՝ հորեղբայրս)։

Այդպես այս երկու գիտնականների օրինությամբ ընդունվեցի բանասիրական ֆակուլտետ։ Ուսումնառությանս հենց սկզբից զգում էի նրանց և ողջ դասախոսական կազմի ակնհայտ համակրանքը, ուշադրությունը, կարելի է ասել հովանավորությունը։ Այդ վերաբերմունքն ավելի էր զգաստացնում ինձ, պարտավորեցնում, որ ավելի լավ սովորեմ։

ԵՐԿՐՈՐԴ ԴՐՎԱԳ

Ա. Աբրահամյանը մեր խմբին գրաբար էր դասավանդում իր գրած «Գրաբարի ձեռնարկով»։ Գիտեինք՝ սիրում էր, որ վերարտադրեինք այն, ինչ կար գրքում, բոլոր մանրամասներով։ Այդպես «Գրաբար ձեռնարկը» գրեթե անգիր գիտեի. չէի ուզում, որ ինքը դժգոհ մնար ինձնից։

Մի օր էլ պրոֆեսորը, որ գրեթե չէր շեղվում նյութից, հիշեց ընդունելության քննության հայտնի պատմությունը, որոշ դրվագներ շարադրությունիցս։ Եվ հավելեց կարևոր մի նախադասություն. «Նա (այսինքն՝ ես) պիտի լինի այստեղ, մեր կողքին»։ Շիկնել ու կարկամել էի. երկրորդ կուրսեցու մասին այդպիսի բան է ասում անվանի գիտնականը։

Ավարտելու նախաշեմին ինչ-որ ցուցակում նշեցի, որ ավարտելուց հետո ուզում եմ աշխատել գյուղական մի դպրոցում (գյուղական ուսուցիչներին բանակ չէին տանում)։ Բայց շաբաթն ուրբաթից շուտ եկավ. հայոց լեզվի ամբիոնը որոշել էր, որ ես պիտի շարունակեմ կրթությունս, զբաղվեմ գիտությամբ։ Հրամանագրվել էի որպես ամբիոնի փորձնական-հետազոտող։ Այսպես շարունակվեց իմ կապը մանկավարժականի հետ։ Այլ հանգամանքով։

Թեմա ունեի, ղեկավար նշանակվել էր Ա. Աբրահամյանը։ Բայց գիտնականը, ավա՛ղ, երկար չապրեց։ Գիտական խորհրդատու դարձավ հայտնի լեզվաբան Պետրոս Բեդիրյանը։

ԵՐՐՈՐԴ ԴՐՎԱԳ

Առաջին կուրսում ավագ էի, երկրորդում՝ կոմերիտական կազմակերպության քարտուղար: Դեկան Վ. Քոսյանն զգում էր, որ դա այնքան էլ սրտովս չէ, և մի օր ասաց, թե ինձ կվստահեն ուսանողական գիտական ընկերության նախագահի պարտականությունը: Թե՛ քարտուղարը և թե՛ ՈՒԳԸ նախագահը ֆակուլտետի խորհրդի անդամ էին, միակ ուսանողները խորհրդում: Դա պատվաբեր էր:

Երրորդ կուրսում էի, երբ հայերենի դասախոս Ալ. Բաբասյանի ղեկավարությամբ գրածս հետազոտական աշխատանքը պետական համալսարանում կազմակերպված մրցույթում արժանացավ մեդալի:

ՉՈՐՐՈՐԴ ԴՐՎԱԳ

Մեդալ ստանալուս շրջանում էր, երբ մեզ չդասավանդած Պ. Բեդիրյանը միջանցքում կանգնեցրեց ինձ (նա հաջորդ տարի՝ ավարտական կուրսում, ոչ փոխաբերական նշանակություն ունեցող կայուն բառակապակցությունների մասին աշխույժ, փոխներգործուն մեթոդներով անցկացվող հատուկ դասընթաց կարդաց մեզ): Ասաց, որ ուսումնասիրածս թեման, որ մեդալի է արժանացել, դիպլոմային աշխատանք ու թեկնածուական դիսերտացիա դառնալու առումով հեռանկարային չէ, և առաջարկեց դիպլոմային աշխատանք գրել «Նախդիրների բառակազմական արժեքը հայերենում» թեմայով: Թեման ինձ դուր եկավ, միաժամանակ ինձ գրավեց հմուտ և սկզբունքային լեզվաբանի ղեկավարությամբ աշխատելու հեռանկարը: Այդ շրջանից սկսեցի աշխատել, փայլուն պաշտպանեցի դիպլոմային աշխատանքս: Ա. Աբրահամյանի վախճանվելուց հետո այդ նյութը դարձավ ատենախոսությանս թեման: Գիտական ղեկավարս՝ Պ. Բեդիրյանը, վստահեց ինձ, ստեղծագործական ազատություն տվեց. ես իմ արած

աշխատանքից հաճույք էի ստանում: Եվ երբ ինչ-որ թյուրիմացության պատճառով կանչվեցի զինվորական ծառայության, հոդվածներիցս երկուսը Պ. Բեդիրյանն անձամբ շարեց իր գրամեքենայով և հանձնեց հրատարակության: Բանակում ստացա տպագրված հոդվածներս: Գիտական ղեկավար–հայցորդ հարաբերության զարմանալի, միաժամանակ օրինակելի նմուշ:

Բանակից վերադարձա, Պ. Բեդիրյանն աշխատում էր Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, ամբիոնի վարիչը պրոֆ. Վ. Քոսյանն էր: Մի օր ասաց. «Ինչո՞ւ չես բերում դիսերտացիադ»: Պատասխանեցի, թե բանակից նոր եմ եկել: Պահանջկոտ հայացքով ասաց. «Ուրիշների նման հո տարիներով չես ձգելու, մեկ տարի հետո անպայման ներկայացնես»: Այդպես էլ արեցի:

Թեկնածուական ատենախոսությունս 1989 թ. փետրվարի 13-ին պաշտպանեցի հարազատ ինստիտուտի մասնագիտական խորհրդում, որի նախագահը Վ. Քոսյանն էր, գիտքարտուղարը՝ Ա. Դոլուխանյանը (ի դեպ, կարճ ժամանակ անձ այդ աշխատանքը վստահվեց ինձ՝ գիտությունների նորաօծ թեկնածուիս):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՐՎԱԳ

Բավական երիտասարդ էի, երբ անցա դասախոսական աշխատանքի: Փորձ ձեռք բերելու առումով կարևոր հանգրվան էր նախապատրաստական դասընթացներում աշխատելը (դիմորդներին պատրաստում էինք ընդունելության քննությանը): Դասավանդում էի պատմության ֆակուլտետում, նկարչականում, հենց սկզբից՝ նաև բանասիրականում. դա այն ժամանակ մեծ պատասխանատվություն էր: Այո՛, չեմ թաքցնում, իմ դասախոսները սիրում, գնահատում, կարելի է ասել ուղղակի հովանավորում էին ինձ՝ նպաստելով իմ առաջընթացին: Գուցե ոմանց դա դուր չէր գալիս, բայց ինձ

համար դա կարևոր չէր: Օրինակ՝ 1993 թ. «Հայաստան» հիմնադրամի հայտարարած մրցույթում ճանաչվեցի տարվա լավագույն երիտասարդ գիտնական՝ բառակազմական իմաստաբանությանը նվիրված հոդվածների համար արժանանալով մրցանակի: Ամբիոնի գործընկերներից ոմանց դա չէր ուրախացրել (գուցե նաև այն պատճառով, որ դրամական մեծ պարգև կար պատերազմի այդ ծանր շրջանում. դժվար է ասել): Մրցանակը ստանալու հաջորդ օրը պրոֆ. Վ. Պարտիզունու կնոջ հոգեհանգստին էի գնացել: Հարգարժան դասախոսս վշտի մեջ ջերմորեն շնորհավորեց հաղթանակս: Ապշած էի. դա չեմ կարող մոռանալ:

Հանգամանքների բերումով 1995-ին կամովին հեռացա հարազատ բուհից:

ՎԵՑԵՐՈՐԴ ԴՐՎԱԳ

Մանկավարժական համալսարանի հետ ինձ բազմաթիվ թելեր են կապում: Միրով մասնակցում եմ համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին, մեկը նույնիսկ կազմակերպել ենք համատեղ՝ ՀՀ Լեզվի կոմիտեն և ՀՊՄՀ Լեզվաբանական հետազոտությունների լաբորատորիան (վարիչ՝ պրոֆ. Լ. Խաչատրյան):

Գիտական հոդվածներ եմ տպագրում համալսարանի «Հայագիտական հանդեսում» (գլխավոր խմբագիր՝ Մ. Գիլավյան):

Անձնական ջերմ հարաբերություններ ունեմ համալսարանի ղեկավարների և շատ աշխատակիցների հետ: Մենք յուրայիններ ենք. համալսարանի հաջողություններն էլ են մերը, հոգսն ու անհաջողությունը՝ նույնպես:

ԽՈՍՔ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ

Երախտապարտ եմ իմ ստացած կրթության համար: Հպարտությամբ եմ ասում, որ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի շրջանավարտ եմ:

Երախտագիտությամբ եմ հիշում իմ բոլոր դասախոսներին, ինձ լեզվաբան, բանասեր ձևավորած գիտնականներին ու մանկավարժներին: Փորձում եմ շարունակել նրանց լավագույն ավանդույթները:

Սրտանց և ջերմորեն շնորհավորում եմ մայր բուհի 100-ամյակն ու մաղթում խաղաղ ընթացք և անընդհատ վերելք: Հայ դպրոցի ապագան այստեղ է ուրվագծվում:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ
Վ. Պարտիզունու անուան Հայ նոր եւ նորագոյն
գրականութեան եւ նրա դասաւանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
«Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնի տնօրէն

ԿՐԹԱԿԱՆ ՄԱՅՐ ԴԱՐԲՆՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԺՈՒԱՐԻՆ ՀԱՐԻՒՐ ՔԱՅԼԵՐԸ

Դարերի մէջ այդ ե՞րբ չենք հպարտացել մեր կրթասիրութեամբ, մեր համալսարաններով, ուսուցչապետերի եւ ուսուցիչների «ծառայական կերպի» անդադրում հեւքով, դէպի լոյսը վերելքի շարունակական, երբեմն նաեւ անհնարին թուացած խոյանքներով։ Մանկավարժական աբովեանական մայր հաստատութեան պատմութիւնը շարունակական է՝ հարիւր տարի առաջ սկիզբ առած եւ վաղուայ մէջ նորանոր սերունդներ ջամբելու, իմաստնութեամբ յարատեւելու վճռականութեամբ։ Այսօր մի պահ միայն կարելի է շրջուել տեսնելու Մաշտոցին հաւատարմութեան այս դարակազմիկ երթը՝ այս դժուարին ժամանակներում նորոգուել-ոգեզինուելու համար։ Անցած հարիւր տարիների շնչառութիւնը մեր թիկունքում ընձեռում է հնարաւորութիւնը երեւոյթը լիարժէք դարձնելու։

Մենք գուցէ ժլատ ենք եղել 20-րդ եւ 21-րդ դարերի մեր ուսուցչապետերին բարձր գնահատանքով մեծարելու ջանքերում՝ նրանց բարձր վարկը հաստատելու ճանապարհին։ Բայց մեզ հետ է հարիւր տարուայ կրթական ամբողջական հարուստ պատմութիւնը։ Վկայ՝ նրանց ոգեկոչելու, այսօր էլ նրանց փորձին ապաւինելու մեր դասերը, նրանց գիտական, մանկավարժական աշխատութիւնները։ Անունները միայն

բաւարար չեն. հարուստ ենք մեր յիշողութեամբ, մերն է պատմութիւնը, մենք՝ աւանդոյթ պահպանող-շարունակողներս։

Սակայն այսօր ստացուել է գնահատութեան հակընթաց մի վիճակ. որքան, թւում է,-կրթական շարժը կանոնակարգւում է, որքան ուսուցչական գործը եւ գիտելիքը կարեւորւում, այնքան մենք աւելի ենք առտնին դարձնում ուսուցչի դերը ընկերութեան սահմաններում՝ նրան դուրս մղելով նոր սերնդի կրթական ճակատագիր արարելու բացառիկութեան իրաւունքից։

Հասարակարգի փոփոխութիւնները, նոր կրթական համակարգի անհրաժեշտ մուտքը փոխել են գնահատութեան փորձուած ձեւերը։ Պատկերաւոր ասած՝ մենք կանգնած ենք կրթական խաչմերուկում ու սպասում ենք կանաչ լոյսին, որ շարունակենք բռնած ճանապարհը։ Անկեղծ, կամ ինչպէս արեւմտահայերն են ասում, շիտակը, չգիտենք, թէ ուր է տանում այդ ճանապարհը, երբ ազգային աւանդոյթը եւ համաշխարհայնացումը տարբեր, յաճախ ճամբաբաժան ճակատագրեր են խոստանում։ Ինքներդ նայեցէք, մեգապոլիս Երեւանը յուսալի ելքեր չի խոստանում, երբ հաշտւում ենք դասարաններում 35-40 աշակերտի խիտ զոյութեան հետ, երբ նոյն պահին դպրոցներ են փակւում հեռաւոր կամ սահմանամերձ, լքուած գիւղերում։ Յամառօրէն չենք ուզում նկատել, որ խաչմերուկներում ամենուր կարմիր, անցման ոչ թոյլատու լոյսն է։

Չմոռանանք, որ աշակերտներին կեանք ճամբած մեր ուսուցիչը անբաւարար աշխատավարձ է ստանում, իսկ նուազագոյն կենսաթոշակի անցումը թշուառութեան դռներ պիտի բացի։ Եւ բնական է, դպրոցը աւարտող երեխան հեռանկարային չի համարի համալսարան գալ, թէկուզ դասախօսները ջանան, ամէն տարի փորձեն որսալ

դիմորդների «վտառներ»՝ նման այն ձկնորսներին, որոնց ուռկանները հնամաշ են ու խոշոր ծակերով։

Այսուհանդերձ, մենք հաւատում ենք Խ. Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի վաղուան։ Դրան գալիս ենք մարդակերտման եւ դրանից առաջ հայակերտման այն առաքելութեամբ, որ մեզ ուղեկցում է 5-րդ դարից ի վեր՝ բացարձակի չափանիշով, ազգային տեսլականի պաշտպանութեամբ, մեր նահանջներով անգամ, պարտութիւններով, սխալներով, գաղափարական ընկրկումներով նոյնիսկ։

Գուցէ տարօրինակ հնչի, միւս բաժանմունք-ֆակուլտետների դերն ու նշանակութիւնը կարեւորելով հանդերձ, պիտի խորապէս ընդգծել, որ մանկավարժականում ազգայինի դիմորոշ ոգին առաջնորդում են ոսկեղէնիկ լեզուի եւ գրականութեան, պատմութեան արժէքները եւ կենսաճանաչողութիւնը։ Այլ կերպ լինել չի էլ կարող առաւելապէս հիմա, երբ ունենք ազգային ինքնիշխանութիւն 616 տարիների կորստեան խորքի վրայ։ Յիշենք, երբ դարեր շարունակ ռազմական դոկտրինայի գաղափարը, երրորդ ուժի ստուերը ուժահատ ժողովրդին ապաւէն չէին, հայութեան յարատեւութեան համար մաքառման խորհուրդը, հայկական պետականութեան մոդէլի ուժականութիւնն իրենց ուսերին տանում էին լեզուն՝ հզօր մշակոյթով, եկեղեցին եւ տիրական բացարձակի խորհրդով՝ կրթութիւնը, որ յաճախ լուսաւորութեան ծանրագոյն յանձնառութեամբ ստանձնում էր վերջին խրամ-խրամատի գործառոյթը։ Վկան՝ միջնադարից եկող մեր համալսարանները։

Ահա թէ ինչու, այսօր էլ հաւատում ենք Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի ներքին ուժականութեանը։

Ցանկութիւնս է, որ մեր Համալսարանը խորապէս գիտակցի իր կրթական առաջնորդութեան ձգտող,

համահայկական առաքելութիւնը, որ բխում է արեւմտահայ գրամշակութային արժէքների խորացած ուսումնասիրութեան այն փորձից, որ իւրացրել են բանասիրական բաժանմունքը, Վ. Պարտիզունու անուան Հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնը վերջին տասը տարիների ընթացքում, «Սփիւռք» Գիտաուսումնական Կենտրոնը՝ երկու եւ աւելի տասնամեակ ծաւալած արեւմտա-հայագիտական դասընթացներով, որոնցով էապէս մօտեցրել է Համալսարանը մեր նշած համահայկական կրթական տեսլականի խորհրդին։

2023-2024 ուսումնական տարուանից, վստահութիւն ենք յայտնում, առաջինը Հայաստանի Հանրապետութիւնում, Համալսարանում կը սկսի գործել «Արեւմտահայ լեզու եւ գրականութիւն» մասնագիտացումով մագիստրոսական ծրագիրը, ինչը կը համախմբի Սփիւռքի եւ հայրենի ուսանողներին կրթական շարունակական ընթացքների շուրջ։ Բոլորս գիտենք դրա անհրաժեշտութիւնը, այն երակը, որով կը վերանորոգուի, զարթօնք կ’ապրի արեւմտահայ մարմրող շունչը։

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԵՐԱԶԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Դեռ դպրոցական տարիներին մեզ ուսուցանել էին, որ Խաչատուր Աբովյանը երազում էր Հայաստանում ունենալ օրինակելի դպրոցներ ու բարձրակարգ կրթություն: Նրա երազանքն իրականացավ 1922-ին, երբ նորաբաց Երևանի պետական համալսարանից անջատվեց ու հիմնվեց Հայաստանի համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մանկավարժական մայր բուհը: Հատկանշական է, որ այդ լուսավոր ու ապագային միտված ձեռնարկը իրագործվեց Հայաստանի համար չափազանց ծանր քաղաքական ու տնտեսական պայմաններում:

Ես այդ բուհում եմ 17 տարեկանից, ու ինձ դասավանդել են շատ արժանավոր դասախոսներ, որոնք եղել են իրենց ժամանակի նշանավոր գիտնականները: Չեմ կարող այս հոբելյանական խոսքում չհիշատակել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ, նշանավոր լեզվաբաններ Արարատ Ղարիբյանին, Աշոտ Աբրահամյանին, որը գրաբարին տիրապետում էր Ոսկեդարի մեծերի մակարդակով, վաստակաշատ դոկտոր, պրոֆեսորներ Վաղարշակ Քոսյանին, Բոգդան Վերդյանին, Պետրոս Բեդիրյանին, ռուս գրականության հիանալի մասնագետ պրոֆեսոր Պարույր Սահակյանին, հունահռոմեական գրականության եզակի գիտակ Առաքել Առաքելյանին, արտասահմանյան

գրականության իմաստությունը ուսանողներին փոխանցող Սողոմոն Սողոմոնյանին, նշանավոր պատմաբան, հնագետ, բանասեր, ակադեմիկոս, անկրկնելի Մորուս Հասրաթյանին, պրոֆեսոր պատմաբաններ Զավեն Գրիգորյանին, Սուրեն Հակոբյանին, շատ սիրված դեկան Արտաշես Պողոսյանին, տնտեսագետ Վազգեն Աղզումցյանին, քաղաքագետներ Աշոտ Փարեմուզյանին և Կարլեն Միրզախանյանին:

Իհարկե ինձ համար հատուկ դեր ուներ հայ գրականության ամբիոնը՝ մեծ հմայքի տեր բազմավաստակ գրականագետ Վաչե Պարտիզունու գլխավորությամբ: Ինձ դասավանդել են եզակի նկարագրի տեր պրոֆեսոր Արշալույս Բաբայանը, պրոֆեսոր Եղիշե Պետրոսյանը, դոցենտ Աշոտ Մկրտչյանը: Թվարկած անուններն անմնացորդ նվիրյալներ էին և նրանց հնարավոր չէ մոռանալ:

Պատմալեզվագրական ֆակուլտետում իմ ուսումնառության տարիներին սովորում էին ուսումնատենչ, բնությունից օժտված տղաներ ու աղջիկներ: Մեր կուրսից մեկ կուրս բարձր սովորում էր Հրանտ Մաթևոսյանը՝ հայ գրականության դասականներից մեկը: Մեր կուրսում էին սովորում երկու մեծատաղանդ բանաստեղծներ՝ Ռազմիկ Դավոյանն ու Արմեն Մարտիրոսյանը:

Ուսման տարիներին կար ձգտում լավի ու լավագույնի համար:

Ես իմ շնորհակալական խոսքն եմ հղում իմ սիրելի դասախոսներին, որոնց համար մեծագույն հաճույքն էր իրենց ուսանողի առաջընթացը:

Այսօր Խաչատուր Աբովյանի անունը կրող մանկավարժական մայր բուհը պահպանում է լավագույն ավանդները, իսկ բանասիրական ֆակուլտետի դեկանատը ու ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը ջանում է առաջադեմ ավանդույթներով ու գիտամանկավարժական խոր

գիտելիքներով ուսուցիչներ տալ հայ դպրոցին՝ Հայոց պետականության ամենակարևոր հիմքին:

Շնորհավորում եմ բոլոր նրանց, ում թանկ է մանկավարժական բուհը և հավատում եմ մեր բուհի հաստատուն առաջընթացին:

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Լեզվաբանական հետազոտությունների
գիտական լաբորատորիայի վարիչ
Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԴԱՐԲՆՈՑԻ 100-ԱՄՅԱԿԸ

Հայոց դպրության արշալույսին՝ գրերի գյուտից անմիջապես հետո, Հայոց աշխարհում զարկ տվեցին գիտությանը՝ ուսանողներ առաքելով արտերկրի դպրության օջախներ, ստեղծեցին դպրության կենտրոններ, գրվեցին քերականական արվեստի մեկնություններ, կատարեցին դավանաբանական ժանրի թարգմանություններ, և այդպես հեթանոսությունից քրիստոնեության անցած ժողովրդի սերունդները ժամանակն ու տարածությունը հատեցին գիտության ռահվիրաների ջահերի ներքո։

Գիտության ջահը փոխանցվեց միջնադարյան Հայաստանի համալսարաններ՝ Գլաձոր, Տաթև, Քռնայի վանք և վերջապես Սուրբ Ղազար, որոնք մանկավարժական հաստատություններ էին, քանի որ սովորեցնում էին «յոթն ազատ գիտությունները», իսկ սովորեցնելն ու ուսուցանելը ինքնին մանկավաժություն է։

Ժամանակները փոխվեցին, փոխվեց նաև մանկավարժություն հասկացության բովանդակությունն ու այն իրագործելու մեթոդական ռազմավարությունը։ Նոր ժամանակները բերում են նոր բովանդակություն, որ համահունչ լինի հասարակության պահանջներին և բավարարի նրա կարիքները գիտության, կրթության, տեխնիկայի, բժշկության, արվեստի, ճարտարապետության և այլ բնագավառներում։

Նոր ժամանակների հրամայականն էր Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ծնունդը (նախկին՝ մանկավարժական ինստիտուտի), որի 100-ամյա հոբելյանը պատրաստվում ենք տոնել ազգովի: Ազգովի, որովհետև մանկավարժական համալսարանը, 100 տարի առաջ անջատվելով Երևանի պետական համալսարանից, սկսեց ազգի կրթության ու դաստիարակության վսեմ առաքելությունը՝ չափազանց սուղ պայմաններում, դասախոսական համեստ կազմով, ֆակուլտետների և ամբիոնների պայմանական բաժանումներով, նվազ ուսանողական կազմով, սակայն հայրենանվեր գործին լծվելու եռանդով և վճռականությամբ:

Մանկավարժական համալսարանը 100 տարում ընդարձակեց դասավանդվող առարկաների աշխարհագրությունը, համաձայն որի՝ ձևավորվեցին ֆակուլտետները, ամբիոնները, համալսարանի դռները բացվեցին Սփյուռքի հայազգի ուսանողների համար, նա դուրս եկավ միջազգային ասպարեզ՝ կապեր հաստատելով աշխարհի լավագույն բուհերի հետ, ապահովելով ուսանողների կրթությունն արտերկի համալսարաններում, միաժամանակ ընդունելով նույն համալսարանների ուսանողներին՝ ծանոթանալու հայկական մշակույթին, արվեստին, գիտության նվաճումներին:

Համալսարանը մնայուն արժեք է ձեռք բերել իր մասնագիտական կադրերով, որոնցից շատերը մեծ ճանաչում են վաստակել Հայաստանի սահմաններից դուրս, համասարանն իրավունք ունի հպարտանալու իր շրջանավարտներով, որոնք հայոց դպրության սերմերը շաղ են տալիս ոչ միայն հանրապետության կրթական հաստատություններում, այլև Սփյուռքի հայահոծ գաղթօջախներում...

Մանկավարժական համալսարանն անմասն չի մնացել հասարակական-քաղաքական հեղաբեկումներից. նրա դասախոսներն ու սաները մասնակցել են Հայրենական մեծ

պատերազմին և փառքով են պսակել իրենց անունները, շատերը մասնակցել են Արցախյան առաջին և երկրորդ պատերազմներին՝ պատրաստ իրենց կյանքը դնելու հայրենիքի փրկության զոհասեղանին...

Մանկավարժական համալսարանի բակում վեր են խոյանում նրանց սխրանքը հավերժացնող հուշակոթողները. համալսարանը հարգել գիտե իր անձնուրաց զավակներին...

Յուրաքանչյուր ոք համալսարանի մասին խոսելիս ելնում է իր անձնական ապրումներից, իր ընկալումներից, համալսարանում ստացած կրթությունից և այն միջավայրի տպավորությունից, որտեղ ձևավորվել է ինքը՝ որպես անհատ ու քաղաքացի, որպես մասնագետ ու մանկավարժ:

Տողերիս հեղինակը նույնպես մանկավարժական համալսարանի սան է. երբ ես ընդունվեցի մանկավարժական համալսարան, համալսարանը դեռ չէր բոլորել իր կեսդարյա հոբելյանը: Ավելի քան կես դար ես քայլում եմ համալսարանի հետ՝ նախ՝ որպես ուսանող, ապա՝ ասպիրանտ, դասախոս, գիտության թեկնածու, դոցենտ, դոկտոր, պրոֆեսոր: Ինչո՞ւ եմ թվարկում. շատ պարզ, որ հպարտությամբ նշեմ՝ այդ աստիճաններն ու կոչումները ստացել եմ մայր բուհում: Մանկավարժական համալսարանն այդ առումով ինձ համար եղել է «սնուցող հող է և մայրական գիրկ»:

Իրոք, երևույթներին նայում և երևույթներն արժևորում են սեփական դիտանկյունից, սեփական հոգու պրիզմայով: Այդ գնահատականը, բարձր գնահատականը պատշաճում է մանկավարժական համալսարանին, որ հարյուր տարում տվել է բազմահազար մանկավարժներ և շարունակում է ազգանվեր առաքելությունը՝ հայոց դպրոցին, մշակույթին, գիտությանը տալով որակյալ կադրեր, որոնք իրենց բնագավառներում արարում են մայր բուհի պատգամներին հավատարիմ:

Համալսարանը հարյուր տարում վերաճել է հոգևոր հզոր դարբնոցի. մեկ տասնյակից ավելի ֆակուլտետներ, հիսունից

ավելի մասնագիտական ամբիոններ, գիտական գրադարան, թանգարան, տարատեսակ վարչություններ, լրատվական կենտրոն, սեփական լրատվամիջոց, հենակետային դպրոց, վարժարան, գիտահետազոտական կենտրոն, գիտական լաբորատորիաներ, մասնագիտական խորհուրդներ և այլն։ Եվ այս բոլոր բաղադրիչներն աշխատում են միասնաբար, անխափան և արդյունավետ՝ ղեկավարվելով բուհի ռեկտորատի ձեռամբ։

Համալսարանի գիտակրթական ալգորիթմը ի սկզբանե եղել և մնում է բուհի ռեկտորների հոգածության առարկան. նորաստեղծ կրթօջախի առաջին ռեկտորից՝ պրոֆ. Արշ. Շավարշյանից մինչև ներկայիս ռեկտորը՝ պրոֆ. Սրբուհի Գևորգյանը, բոլոր ղեկավարները ջանք ու եռանդ չեն խնայել բուհում կրթական գործընթացների որակի բարձրացման, ուսանողակենտրոն համակարգի մշակման, գիտական միջավայրի ապահովման, նրա միջազգային համբավի տարածման և հարակից այլ խնդիրների լուծման առումներով։

Իբրև բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ և նույն բանասիրականի դասախոս՝ կարող եմ ասել, որ մեր հոգևոր աշխարհը ձևավորվել է մեր ուսուցիչների անմիջական ազդեցության ներքո, որոնք, ծառայելով հարազատ բուհի գիտակրթական ծրագրերի իրականացմանը, միաժամանակ պատրաստել են կադրեր՝ իրենց ապագա փոխարինողներին։ Նրանք, ովքեր աճել են մայր բուհում, երախտապարտ են մանկավարժականի իրենց դասախոսներին. դասախոսներ, որոնք օգնեցին սաներին «բարձրանալու իրենց ուսերին»՝ հեռվից տեսնելու սեփական հորիզոնը...

Այդ հորիզոնն առավել տեսանելի է դառնում հարյուրամյա բուհի հետ զրուցելիս...

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Պատմության և հասարակագիտության
ֆակուլտետի դեկան
Պատմ. գիտ. թեկն., դոցենտ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ՝ ՆԱԵՎ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը տասնամյակներ շարունակ հանրապետության կարևոր հայագիտական կենտրոններից մեկն է եղել, բանասիրության, պատմության, հասարակագիտության բնագավառում մանկավարժներ պատրաստող գլխավոր հաստատությունը: Մանկավարժականի հումանիտար ֆակուլտետների շրջանավարտները տասնամյակների ընթացքում իրենց ավանդն են ունեցել մատաղ սերնդի հայեցի դաստիարակության, ինչպես նաև պատմագիտության, բանասիրության, գրականագիտության զարգացման գործում: Պատահական չէ, որ Մանկավարժականում առաջիններից են եղել Պատմության և Բանասիրական (Լեզվագրական) ֆակուլտետները, որոնք իրենց գործունեությունը սկսել են հեռավոր 1930-ական թվականների սկզբներից և շարունակում են մինչև օրս: Հարյուրամյա համալսարանի հայագիտական ամբիոններում աշխատել և ներկայում էլ աշխատում են մեծավաստակ գիտնականներ, որոնց ներդրումը հումանիտար գիտությունների տարբեր ճյուղերի զարգացման գործում անուրանալի է: Այդ երախտավորների շարքում են Մկրտիչ Ներսիսյանը, Մորուս Հասրաթյանը, Հայկազ Ժամկոչյանը, Վարդան Պարսամյանը, Սուրեն Երեմյանը, Կարո Ղաֆադարյանը, Համո Հարությունյանը, Մանվել Զուլալյանը, Միհեր Կարապետյանը, Վաղարշակ Քոսյանը, Արարատ Ղարիբյանը, Առաքել Առաքելյանը, Վաչե Պարտիզունին, Աշոտ

Աբրահամյանը, Պարույր Սահակյանը, Արշալույս Բաբայան, Բոգդան Վերդյանը:

Մեր օրերում համալսարանը շարունակում է իր կարևոր ներդրումն ունենալ հայագիտության զարգացման բնագավառում: Հայագիտության երախտավորները ջանքեր են գործադրում կրթական, ուսումնական, գիտական, միջազգային համագործակցության բնագավառում նոր ձեռքբերումներ և կայուն զարգացում ապահովելու ուղղությամբ: Համալսարանում պատմություն և բանասիրություն ուսումնասիրող ուսանողները մշտապես ակտիվորեն ներգրավված են տարաբնույթ ուսանողական և երիտասարդական միջոցառումներին, նրանցից շատերը իրենց առաջին գիտական քայլերը կատարում են ուսանողական նստարանից սկսած:

Վերջին տարիներին զգալիորեն ընդլայնվել է մանկավարժական համալսարանի միջազգային համագործակցության շրջանակը: Այդ ուղղությամբ արձանագրվել են մի շարք կարևոր ձեռքբերումներ: 2016թ. համագործակցության պայմանագիր է ստորագրվել ՀՊՄՀ և Բուդապեշտեի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի միջև: Պայմանագրի հիման վրա նույն թվականին այդ համալսարանի Հումանիտար և հասարակական գիտությունների ֆակուլտետում բացվել է Հայագիտության ամբիոն: Հաշվի առնելով, որ վերջին տասնամյակներում արտասահմանյան հայագիտական ամբիոնները հիմնականում փակվում են կամ խիստ սահմանափակ գործունեություն իրականացնում, ապա սա կարելի է համարել աննախադեպ երևույթ: Այդ ամբիոնում վերջին տարիներին տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում ուսանել են մանկավարժական համալսարանի մի քանի տասնյակ ուսանողներ: Այդ կրթական հաստատությունում ուսանում են հայ երիտասարդներ նաև Արցախից և Սփյուռքից: Միջազգային կապերի ընդլայնման շրջանակներում կապեր են հաստատվել նաև մի շարք այլ

արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես՝ ՌԴ Ուրալի դաշնային, Ֆրանսիայի Լիլի, Իսպանիայի Կորունայի, Լիբանանի «Հայկազյան» համալսարանների:

Համալսարանում ակտիվ է նաև գիտական կյանքը, մասնավորապես հայագիտության բնագավառում: 2003թ. հրատարակվել է «Հայագիտական հանդես» պարբերականը, որն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների դրույթների հրատարակման ընդունելի ցուցակում: Համալսարանում գործում են նաև մի շարք գիտահետազոտական լաբորատորիաներ, որոնք կարևոր ներդրում ունեն արդի հայագիտության զարգացման բնագավառում, ինչպես՝ «Հայաստանը 1920-1991 թվականներին» լաբորատորիան, «Լեզվաբանական հետազոտությունների լաբորիատորիան»: 2015-2018 թթ. պատմության ֆակուլտետը հրատարակել է «Պատմություն և հասարակագիտություն» գիտական տարեգիրքը: Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են հայագիտական հանրապետական և միջազգային գիտաժողովներ, որոնցից հիշատակության արժանի են «Ազգ, պետություն, հայրենիք, պետականության գաղափարը», «Հայության տեղաշարժերը և հասարակական-քաղաքական փոխակերպումները 20-րդ դարում և 21-րդ դարի սկզբին» և այլն:

Համալսարնում կարևոր տեղ է հատկացվում նաև հայագիտական առարկաների դասավանդման հարցերին, պարբերաբար կազմակերպվում են գիտաժողովներ՝ նվիրված դասավանդման մեթոդիկայի, համալսարան-դպրոց կապերին. բարձր հիմքերի վրա է դրված համալսարան-դպրոց կապը:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Գիտական գրադարանի տնօրեն

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՇԱՆԱՎՈՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Մուտք

2022 թվականի նոյեմբերի 7-ին լրանալու է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակը: 1922 թվականի սեպտեմբերի 30-ին այդ ֆակուլտետի բազայի վրա ստեղծվել է հայկական երկրորդ ինքնուրույն (մանկավարժական) ինստիտուտը[1], որի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1922 թվականի նոյեմբերի 7-ին: 1925 թվականին Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը տվել է եռամյա ուսուցմամբ առաջին շրջանավարտները: Այդ ժամանակից սկսած առ այսօր համալսարանն իր առկա, հեռակա, երեկոյան, ասպիրանտական բաժիններով, Գյումրիի և Գորիսի մասնաճյուղերով տվել է 100 հազարից ավելի շրջանավարտ:

Պատմությունից

Ուսուցչական կադրերի պատրաստման խնդիրը լուծելու նպատակով 1921 թվականի հոկտեմբերին Երևանի պետական համալսարանում բացվել է մանկավարժական ֆակուլտետ:

---

[1] *1948 թվականի սեպտեմբերի 23-ին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ մանկավարժական ինստիտուտին տրվել է մեծ լուսավորիչ-մանկավարժ Խաչատուր Աբովյանի անունը: 2000 թվականի ապրիլի 3-ին Երևանի պետական մանկավարժական ինստիտուտը վերանվանվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան:*

ՀԽՍՀ լուսժողկոմատի 1921 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 101 հրամանով ֆակուլտետի դեկան է նշանակվել Եվրոպայում բարձրագույն կրթություն ստացած, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, մանկավարժ **Գուրգեն Էդիլյանը**[2], իսկ նոյեմբերի 28-ին լուսժողկոմատի թիվ 4 հրամանով ֆակուլ-տետում մանկավարժության դասախոս է նշանակվել Արշավիր Շավարշյանը[3]: 1922 թվականի հունիսի 14-ին Լուսժողկոմատը, մանկավարժական կադրերի պատրաստման գործը կանոնակարգելու նպատակով, առաջարկվել է ստեղծել առանձին մանկավարժական ինստիտուտ[4]: Հաշվի առնելով այդ հանգամանքը ԵՊՀ ռեկտորը 1922 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 44 հրամանով լուծարել է մանկավարժական ֆակուլտետը և աշխատանքից ազատել Գուրգեն Էդիլյանին, դասախոսներ Արշավիր Շավարշյանին, Տիգրան Ռաշմաճյանին, Սարգիս Հովհաննիսյանին, մյուսներին[5]:

1922 թվականի սեպտեմբերի 30-ին, ՀԽՍՀ լուսժողկոմատը որոշել է ստեղծել ինքնուրույն մանկա-վարժական ինստիտուտ՝ եռամյա դասընթացով[6]: Հոկտեմբերին լուսժողկոմատի կոլեգիան հաստատել է մանկավարժական ինստիտուտի հաստիքացուցակը՝ տնօրեն, 17 դասախոս, 1 քարտուղար, 6 տեխնիկական աշխատող[7]: Շրջանային լուսբաժիններին ուղարկվել է հետևյալ հայտարարությունը. «ՀՍԽՀ լուսժողկոմատի մանկավարժական ինստիտուտ կարող են ընդունվել միջնակարգ դպրոցավարտները, շտապեն իրենց գործերը ներկայացնել մանկավարժական ինստիտուտի

---

[2] *ԵՊՀ արխիվ, հրամանների մատյան, 1920-1930 թթ-ին, էջ 8:*
[3] *Նույն տեղու,, էջ 9:*
[4] *Նույն տեղում, գործ 250, էջ 1:*
[5] *Նույն տեղում, էջ 12:*
[6] *ՀՀ ազգային արխիվ, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 89, թերթ 62:*
[7] *Նույն տեղում, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 270, թերթ 5:*

վարչություն»[8]: Տնօրեն (ռեկտոր) է նշանակվել եվրոպական բարձրագույն մանկավարժական կրթություն ստացած **Արշավիր Շավարշյանը**: Դասախոսական աշխատանքի են հրավիրվել Վահան Աբրահամյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Տիգրան Ռաշմաճյանը, Արսեն Տերտերյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Բահատուր Բահատրյանը, ուրիշներ: Հաջորդ ուսումնական տարվա սկզբին ինստիտուտն ուներ 24 դասախոս[9]:

ՀԽՍՀ լուսժողկոմատի կոլեգիան 1922 թվականի հոկտեմբերի 15-ին հաստատել է ինստիտուտի «ծրագիր տախտակը» (դասատախտակը): Ուսուցանվելու էր 46 առարկա, որոշվել է դասախոսների աշխատավարձը հավասարեցնել Երևանի ժողովրդական համալսարանի (Երևանի պետական համալսարան) դրույքաչափին:

Դասատախտակով նախատեսվել են հետևյալ առարկաները՝

1. Խորհրդային իրավունք՝ 2 ժամ, **Գր[իգոր] Չուբար**,
2. Պատ. մատերիալիզմ՝ 4 ժամ, **Հ[այկ] Ազատյան**,
3. […][10] աշխատություն՝ 4 ժամ, **Դր[աստամատ] Տեր-Սիմոնյան**,
4. Գրականության պատմություն՝ 4 ժամ, **Ա[րսեն] Տերտերյան**,
5. Մաթեմատիկա՝ 7 ժամ, **Ա[րսեն] Բեջանյան**,
6. Քիմիա՝ (մաթեմատիկայի հետ),
7. Կենդանաբանություն՝ 3 ժամ, **Ավ[ետիք] Տեր-Պողոսյան**,

---

[8] *Նույն տեղում, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 89, թերթ 1-62, նաև ֆոնդ 122, ց.1, գ.270, թերթ 5:*

[9] *ՀՀ ազգային արխիվ, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 266, թերթ 1-3:*

[10] *Անընթեռնելի:*

8. Մանկավարժության պատմություն՝ 2 ժամ, **Հ[ովհաննես] Տեր-Միրաքյան**,
9. Աշխատ.դպրոցի տեսութ.՝ 2 ժամ, **Ա[րշավիր] Շավարշյան**,
10. Հոգեբանություն՝ 2 ժամ, **Տ[իգրան] Ռաշմաճյան**,
11. Երաժշտություն՝ 2 ժամ, **Ռ[ոմանոս] Մելիքյան**,
12. Նկարչություն՝ 2 ժամ, **Ս[արգիս] Հովհաննիսյան**,
13. Առողջապահություն՝ 2 ժամ, **Ա[ռամ] Տեր-Գրիգորյան**[11]:

1923 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում դասավանդել են՝

1. Պատմություն՝ 3 ժամ, **Ստեփան Ներսիսյան** (1922-ի ապրի 1-ից),
2. Բուսաբանություն՝ 4 ժամ, **Տիգրան Մուշույան**, -//-
3. Մարդու անատոմիա և ֆիզ[իոլոգիա]՝ 3 ժամ, **Ավ[ետիք] Տեր-Պողոսյան** (1922-ի նոյեմբերի 1-ից),
4. Քիմիա՝ 2 ժամ, **Արսեն Բեջանյան**, -//-
5. Նկարչություն՝ 3 ժամ, **Ս[արգիս] Հովհաննիսյան**, -//-
6. Հոգեբ. լաբորատոր աշխատանք՝ 6 ժամ, **[Արշավիր] Շավարշյան, [Տիգրան] Ռաշմաճյան**, **[Հովհաննես] Տեր-Միրաքյան**, -//-
7. Քաղաքատնտեսություն՝ 3 ժամ, **Իս. Տեր-Ներսիսյան** [՞] (ապրիլի 1-ից),
8. […][12] լաբ. աշխատանք՝ 2 ժամ, **Աշխեն Ներսիսյան**[՞], -//-

---

[11] *Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի 50 տարին (1922-1972), Ե., 1972 թ., էջ 11 (տպագրված է փաստաթղթի բնագիրը):*

[12] *Անընթեռնելի:*

9. Այգեգործության հիմունք[ներ]՝ 2 ժամ, **Գեվորգ Գրձելյան**, -//-[13]:

Ինստիտուտի հանդիսավոր բացումը տեղի է ունեցել 1922 թվականի նոյեմբերի 7-ին՝ Հոկտեմբերյան հեղափոխության 5-րդ տարելիցի օրը[14]: Ժամանակի փաստաթղթերից մեկում գրվել է. «**Նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի տոնին, հայտարարվեց մանկավարժական ինստիտուտի բացումը…**»[15]: Սակայն դասերը պաշտոնապես սկսվել են նոյեմբերի 27-ին, նախկին Հռիփսիմյան գիմնազիայի շենքում[16]:

Առաջին տարում ինստիտուտ է ընդունվել 42 ուսանող: 1923-1924 ուումնական տարում ուսանողների թիվը հասել է 78-ի, առաջին կուրսում՝ 42 (երեքը՝ ազատ ունկնդիր), երկրորդ կուրսում՝ 36 (չորսը՝ ազատ ունկնդիր): 1923 թվականի հունվարին ինստիտուտին տրվել է հանրակացարան, կարիքավոր 28 ուսանողների տրվել է 20 ռուբլի թոշակ[17]: Դասերը սկսվել են երեկոյան ժամը 16-ին, ավարտվել ժամը 20-ին: Շաբաթվա չորս օրերին կարդացվել են դասախոսություններ, իսկ երկուշաբթի և ուրբաթ օրերը հատկացվել են լաբորատոր, արհեստագործական, հողագործական աշխատանքներին:

1925 թվականին ինստիտուտը դպրոցներին տվել է եռամյա կրթությամբ 17, երկամյա կրթությամբ՝ 36, միամյա կրությամբ՝ 30 ուսուցիչներ:

---

[13] *Նույն տեղում, էջ 11:*

[14] *Նույն տեղում, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 266, թերթ 1, 3:*

[15] *Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի 50 տարին (1922-1972), Ե., 1972 թ., էջ 8 (տպագրված է փաստաթղթի բնագիրը):*

[16] *ՀՀ ազգային արխիվ, ֆոնդ 569, ցուցակ 1, գործ 3, թերթ 10:*

[17] *Նույն տեղում, ֆոնդ 122, ցուցակ 1, գործ 266, թերթ 24-27:*

1925 թվականի հուլիսին մանկավարժական ինստիտուտը կրկին միացվել է Երևանի պետական համալսարանին՝ որպես հասարակագիտական ֆակուլտետի մանկավարժական բաժանմունք[18]: 1926 թվականին, Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի պլենումի պահանջով, ԵՊՀ մանկավարժության ֆակուլտետում ստեղծվել են երեք **պատմագրական, ֆիզիկամաթեմատիկական, կենսաբանաքիմիական** բաժիններ, որոնք պետք է պատրաստեին ուսուցիչներ:

Անդրֆեդերացիայի կառավարության 1930 թվականի հունիսի 14-ի որոշմամբ Երևանի պետական համալսարանը կազմացրվել է առանձին ինստիտուտների: Հասարակագիտական ֆակուլտետը (մանկավարժական բաժանմունքով) ՀԽՍՀ լուսավորության ժողկոմատի իրավասության տակ վերակազմակերպվել է ինքնուրույն մանկավարժական ինստիտուտի, որին են տրվել ԵՊՀ շենքը, բոլոր ուսումնաօժանդակ կառույցներն ու լաբորատորիաները, հանրակացարանը: Հուլիսի 3-ին հաստատվել է մանկավարժական ինստիտուտի վարչատնտեսական ապարատը՝ 30 հաստիքով, տնօրեն է նշանակվել մանկավարժ **Մուշեղ Սանթրոսյանը**: Երկու օր անց մանկավարժական ինստիտուտում բացվել են վեց՝ գրական-լեզվաբանական, պատմա-տնտեսագիտական (հասարակագիտական-տնտեսագիտական), աշխարհագրական, ֆիզիկա-մաթեմատիկական, մանկաբանական-մանկավարժական (դպրոցական և նախադպրոցական թեքումով), քիմիական-ագրոկենսաբանական ֆակուլտետները: Փաստորեն ԵԺՀ-ի դերակատարությունը ստանձնել է մանկավարժական ինստիտուտը[19]: Մանկավարժական ինստիտուտը 1930 թվականին տվել է 67, 1931-ին՝ 126, 1932-ին՝ 112, 1933-ին՝ 347

---

[18] *Նույն տեղում, ֆոնդ 569, ցուցակ 1, գործ 5, թերթ 53:*

[19] *Ղարիբջանյան Լ.Պ., Երևանի պետական համալսարանը (1920-1930 թթ.), Ե., 1963 թ., էջ 43:*

շրջանավարտ-մանկավարժ[20]: Փաստորեն 1927-1929 թվականներին Երևանի ժողովրդական համալսարան, ինչպես նաև 1930 թվականին մանկավարժական համալսարան ընդունվածները ուսումն ավարտելուց հետո ստացել են մանկավարժական ինստիտուտի դիպլոմ, իսկ 1930 թվականին մանկավարժական ինստիտուտ ընդունվածները 1933 թվականից հետո ստացել են Երևանի ժողովրդական համալսարանի դիպլոմներ: 1930-1933 թվականներին մանկավարժական ինստիտուտի ֆակուլտետները, բաժինները, ժողովրդական տնտեսության պահանջներին համապատասխան, քանիցս անվանափոխվել են:

1930-1931 ուստարում ինստիտուտի կազմում գործել են 6 ֆակուլտետ՝ 659 ուսանողով: Ըստ ֆակուլտետների 1930 թվականմին ստեղծվել են 16, 1931 թվականին՝ 27 ամբիոններ: Ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմը հասել է 101 մարդու (19 պրոֆեսոր, 17 դոցենտ, կոչումներ չունեցող դասախոսներ):

1930-1933 թվականներին ինստիտուտի կազմում գործել է դեռևս 1928 թվականին ԵԺՀ-ի կազմում բացված ասպիրանտուրան:

1931 թվականի մարտի 16-ին ՀԽՍՀ լուսժողկոմատի թիվ 6 հրամանով մանկավարժական ինստիտուտի իրավասության տակ գտնվող հեռակա ուսուցման բյուրոն դարձել է հեռակա մանկավարժական ինստիտուտ[21]:

1931-1932 ուստարում մանկավարժական ինստիտուտը վերակառուցվել է ինդուստրիալ ագրարային մանկավարժական ինստիտուտի: Տնօրեն է նշանակվել պրոֆեսոր (1933 թ.)

---

[20] *ՀԽՍՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929-1934 թթ.) խորհուրդների 8-րդ համագումարի առթիվ, հրատարակությունը ՀՍԽՀ ժողկոմխորհի, Ե., 1935 թ., էջ 118:*

[21] *Երևանի պետական համալսարանի արխիվ, հրամանների մատյան, 1930-1933 թթ. էջ 35:*

Սահակ Հայրապետյանը: Ստեղծվել են լեզվի և գրականության, պատմատնտեսագիտական, ագրոկենսաբանական (անասնապահության և դաշտավարության բաժիններով), ֆիզիկատեխնիկական (ագրոնոմիական և ինդուստրացման բաժիններով), մանկաբանական-մանկավարժական, քիմիական և պոլիտեխնիկական ֆակուլտետները:

1932-1933 ուստորվա վերջին ՀԽՍՀ լուսժողկոմի հրամանով Ինդուստրիալ ագրարային մանկավարժական ինստիտուտը վերանվանվել է Մանկավարժական ինստիտուտ: Ստեղծվել են ֆիզիկամաթեմատիկական, պատմատնտեսագիտական, կենսաբանական, մանկաբանական-մանկավարժական, քիմիական ֆակուլտետներ: 1930-1933 թվականներին ինստիտուտը տվել է 652 շրջանավարտ:

1933 թվականի սեպտեմբերին Մանկավարժական ինստիտուտի և Կոոպերատիվ-ֆինանսական ինստիտուտի վերամիավորումով կրկին բացվել է Երևանի պետական համալսարանը: Նախկին մանկավարժական ինստիտուտը դարձել է ԵՊՀ-ի մանկավարժական ֆակուլտետ:

1934 թվականի հուլիսի 13-ին, 10 ամիս անց, ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշմամբ, ԵՊՀ մանկավարժական ֆակուլտետը հանվել է ԵՊՀ կազմից և վերջնականապես դարձել է ինքնուրույն մանկավարժական ինստիտուտ[22], որին հատկացվել է Խանջյան 5 հասցեում գտնվող շենքը: Տնօրեն է նշանակվել **Մուշեղ Սանթրոսյանը**: Ինստիտուտում բացվել են պատմության, լեզվի և գրականության, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետները չորսամյա ուսուցմամբ:

---

[22] *ՀՀ ազգային արխիվ, ֆոնդ 122, ցուցակ 2, գործ 3, թերթ 73: Տես նաև մանկավարժական ինստիտուտի արխիվ, 1934-1935 ուտարվա հաշվետվություն, էջ 28:*

Համալսարանի ֆակուլտետները

Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի հիմնական ֆակուլտետները իրենց պատմության հաշվարկը սկսել են 1934 թվականի բաժանումից հետո, որպես այդ թվականին կազմավորված: Մեր համոզմամբ այդպես չէ:

Մանկավարժական համալսարանի բոլոր հիմնական ֆակուլտետները, 1922 թվականին, ստեղծման պահից, որպես առանձին միավորներ՝ բաժիններ, եղել են, այլապես միայն մանկավարժության համար առանձին ինստիտուտ չէր բացվի: Դպրոցներին պետք էին պատմության, լեզվի և գրականության, թվաբանության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության ուսուցիչներ: 1922-1924 թվականներին Երևանի ժողովրդական համալսարան, ի մասնավորո նաև մանկավարժական ինստիտուտ հրավիրված մասնագետները հենց այդ են փաստում: Երևանի պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի առաջին դեկան (1921-1922 թթ-ին), փիլիսոփայության դոկտոր (1908 թ.) **Գուրգեն Էդիլյանը**, հոգեբան-մանկավարժ էր, նույն ֆակուլտետում մանկավարժության դասախոս, ապա մանկավարժական ինստիտուտի առաջին տնօրեն (1922 թ.) նշանակված պրոֆեսոր (1936 թ.) **Արշավիր Շավարշյանը** եվրոպական բաձրագույն մանկավարժական կրթությամբ մասնագետ էր, ինստիտուտի քարտուղար (գիտական քարտուղար) նշանակված **Վահան Աբրահամյանը** մանկավարժ էր, դասախոսներ նշանակված փիլիսոփայության թեկնածու (1896 թ.) **Տիգրան Ռաշմաճյանը**՝ մանկավարժ, դասագրքերի հեղինակ էր, ՀԽՍՀ աշխատանքի հերոս **Հովհաննես Տեր-Միրաքյանը**՝ մանկավարժ-մեթոդիստ էր, բանասիրական գիտությունների դոկտոր (1943 թ.), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943 թ.) **Արսեն Տերտերյանը**՝ գրականագետ-քննադատ էր, պետական-կուսակցական գործիչ **Դրաստամատ**

Տեր-Սիմոնյանը՝ լրագրող, հրապարակախոս էր, Ժնևի համալսարանն ու Գենտի ճարտարագիտական դպրոցն ավարտած **Բահաթուր Բահաթրյանը՝** մաթեմատիկոս էր (1923-1934 թթ-ին դասավանդել է բարձրագույն հանրահաշիվ, թվերի տեսությաուն, մաթեմատիկական անալիզ), պրոֆեսոր (1925 թ.) **Լեոն** (Առաքել Բաբախանյան)՝ պատմաբան, հրապարակախոս, գրող, գրականագետ էր, պրոֆեսոր (1941 թ.) **Ստեփան Լիսիցյանը՝** ազգագրագետ, պատմաբան, աշխարհագրագետ, բանասեր, թարգմանիչ, հրատարակիչ էր, պրոֆեսոր (1933 թ.) **Զաբեթ Խոջանեթյանը՝** մաթեմատիկոս էր, պրոֆեսոր (1925 թ.), Հայաստանում քիմիայի բարձրագույն կրթության հիմնադիր **Լևոն Ռոտինյանը՝** ֆիզիկոս, քիկիկոս էր, պրոֆեսոր (1935 թ.), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1965թ.) **Կարապետ Մելիք-Օհանջանյանը՝** հայագետ-արևելագետ, բանասեր, թարգմանիչ էր: Ավելի ուշ աշխատանքի են հրավիրվել պրոֆեսորներ լեզվաբան, գրականագետ, հայագետ **Գրիգոր Ղափանցյանը**, պատմաբան **Վահան Ռշտունին**, բժիշկ, հոգեբան **Դրաստամատ Տեր-Մկրտչյանը**, մաթեմատիկոս **Աշոտ Տեր-Մկրտչյանը**, ուրիշներ:

ԵԺՀ դասախոսական աշխատանքի են հրավիրվել ու ամենայն հավանականությամբ նաև 1922-1925 թվականներին մանկավարժական ինստիտուտում դասավանդել են պատմաբան, հայագետ **Հակոբ Մանանդյանը** (խորհրդային շրջանում պատմալեզվագրական ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, ապա՝ համալսարանի ռեկտոր, այնուհետև՝ արևելագիտության և պատմագրական ֆակուլտետի դեկան, ապա՝ հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ), լեզվաբան **Մանուկ Աբեղյանը** (1923-1925 թվականներին պատմա-լեզվագրական ֆակուլտետի դեկան), հայագետ, լեզվաբան **Հրաչյա Աճառյանը** (հայագիտական, լեզվաբանական, արևելագիտական առարկաների դասախոս):

Վերը թվարկված մասնագետների անձերով պայմանավորված մասնագիտական բաժինները գործել են 1922-1925 թվականներին: Դրանով է նաև փաստվում հենց այն հանգամանքը, որ 1926 թվականին, Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի պլենումի պահանջով, բարձրակարգ ուսուցիչներ պատրաստելու նպատակով, ԵՊՀ մանկավարժության ֆակուլտետում ստեղծվել են երեք **պատմագրական, ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանաքիմիական** բաժիններ:

Փաստորեն նվազագույնը հենց այդ՝ 1926 թվականով պետք է վերջնականապես ձևավորված համարվեն Մանկավարժական համալսարանի այսօր գործող հիմնական ֆակուլտետները՝ մանկավարժներ պատրաստող սկզբնական կրթության, հոգեբանական կրթության, հատուկ կրթության ֆակուլտետները համահամալսարանական մանկավարժության և ֆակուլտետային ամբիոններով, պատմության և բանասիրության ֆակուլտետները, ֆիզիկայի, մաթեմատիկայի ֆակուլտետները իրենց ամբիոններով, կենսաբանաքիմիական, աշխարհագրական ֆակուլտետը իր ամբիոններով:

Համալսարանի հայտնի շրջանավարտները[23]

Համալսարանի շրջանավարտները թե խորհրդային երկրում, թե Հայաստանի Հանրապետությունում զբաղեցրել են բարձրագույն պաշտոններ, եղել են ՀԽՍՀ կենտգործկոմի նախագահ **Գևորգ Հանեսօղլյան՝** (1925 թվականի առաջին շրջանավարտներից), Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտի քարտուղարներ (**Վաչե**

[23] *Այս և ավելի քան 2000 շրջանավարտների կենսագրություններ ընդգրկված են հոդվածի հեղինակի «Աբովյանցիներ (ավարտել են Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանը)» անտիպ կենսագրական հանրագիտարանում:*

Զաքարյան, Հրաչյա Մարգարյան, Հրանտ Ոսկանյան), Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ (**Հրանտ Ոսկանյան**), ՀՀ Ազգային ժողովի նախագահ (**Արմեն Խաչատրյան**), փոխնախագահ (**Էդուարդ Շերմազանով**) նախարարներ՝ խորհրդային տարիներին՝ **Գևորգ Հանեսօղլյան, Շավարշ Սիմոնյան, Գեղամ Ալեքյան, Ռոլանդ Ավետիսյան, Հայրապետ Հայրապետյան**, Հայաստանի անկախության վերականգնումից հետո՝ մշակույթի նախարարներ **Հակոբ Մովսես**, **Արմեն Ամիրյան**, ՀՀ արդարադատության նախարար, ՀՀ արդարադատության պետական խորհրդական (բանակի գեներալ) **Դավիթ Հարությունյան**, ՀՀ ոստիկանության պետ, գեներալ-լեյտենանտ **Ալիկ Սարգսյան,** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի պետական կոմիտեի նախագահ **Դավիթ Գյուրջինյան**), կուսակցության շրջկոմի առաջին քարտուղարներ (**Բաբկեն Աբրահամյան, Գրիգոր Աթայան, Դրաստամատ Գասպարյան, Հրաչյա Իկիլիկյան, Վազգեն Հարությունյան, Օնիկ Հովակիմյան, Գևորգ Նախշքարյան, Շավարշ Վարդումյան, Հայկ Օհանյան, Ջեմմա Անանյան, Դորա Հարությունյան, Ալինա Հարությունյան, Թամարա Ալոյան**/, շրջխորհրդի գործադիր կոմիտեի նախագահներ **Հրաչիկ Ավետիսյան, Բորիս Գյոզալյան, Դերենիկ Սիմոնյան**): Հատկանշական է, որ թվարկված անձինք եղել են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, մի քանիսը՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ:

Խորհրդային և անկախության տարիներին շրջանավարտներից ոմանք դարձել են գեներալներ (խորհրդային շրջան՝ ականավոր հետախույզ, գեներալ-մայոր **Գուրգեն Աղայան,** գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս **Աշոտ Ամատունի**, ՀՀ զինված ուժերի և այլ ծառայությունների գեներալներ՝ **Արթուր Փափազյան, Վրեժ Գաբրիելյան, Հայկ Միլիտոնյան, Ազատ Թադևոսյան**), բարձրաստիճան սպաներ (խորհրդային շրջան՝ **Սիմոն Եղիազարյան, Սարգիս**

Զաքարյան, **Մուշեղ Սարգսյան, Ալեքսանդր Սարգսյան**, ՀՀ զինված ուժեր՝ **Մեյրան Շահսուվարյան, Ռաֆիկ Մարտոյան, Առաքել Մարտիկյան, Հովհաննես Վարդանյան, Միքայել Վարդանյան** (Շիրակի մարզպետի տեղակալ, ՀՀ ԱԺ պատգամավոր), **Սարգիս Մաճկալյան, Նորիկ Մնացականյան, Տիգրան Պետրոսյանց, Հրաչյա Պետրոսյանց, Դավիթ Սարգսյան, Վարուժան Ադամյան, Պերճ Գևորգյան**, **Արման Սահակյան, Հովհաննես Սաֆարյան, Զարզանդ Ասատրյան**):

ՀՀ դիվանագիտական կորպուսում Հայաստանը այլ երկրներում ներկայացրել ու ներկայացնում են արտարարգ և լիազոր դեսպաններ **Արման Կիրակոսյանը, Արշակ Փոլադյանը, Արմեն Խաչատրյանը,** ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար **Հրայր Կարապետյանը**, ՀՀ դիվանագիտական երկրորդ դասի խորհրդական **Մարինե Հայրապետյանը**:

Համալսարանի շրջանավարտ է ՀՀ բարձրագույն դասի դատավոր **Սերգեյ Աղաբեկյանը**:

Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցել են Համալսարանի երկու հարյուրից ավելի, Արցախյան ազատամարտին՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ պատերազմներին՝ 320-ից ավելի շրջանավարտներ և ուսանողներ: Նրանց մեծագույն մասն արժանացել են խորհրդային և ՀՀ շքանշանների ու մեդալների:

1980-ական թվականների վերջին շատ շրջանավարտներ դարձել են *Արցախյան շարժման* (**Շահեն Մկրտչյան, Բենիկ Միսյան, Կիմ Ղահրամանյան, Սերգեյ Կարապետյան**), պատերազմի ընթացքում՝ *բազմաբնույթ օգնությունների կազմակերպիչներ* (գրող **Մետաքսե**):

Համալսարանի շրջանավարտներից գեներալ-մայոր **Աշոտ Ամատունին** արժանացել է Խորհրդային Միության հերոսի, **Մովսես Գորգիսյանը**՝ Հայաստանի Հանրապետության Ազգային հերոսի, **Ալեն Մարգարյանը**՝ Արցախի Հանրա-

պետության հերոսի կոչման: Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բարձրագույն ռազմական Մարտական խաչ առաջին աստիճանի շքանշանների է արժանացել շրջանավարտ **Մեխակ Մեխակյանը**:

Կրթության և երկրի տնտեսության վերականգնման գործում ունեցած ավանդի համար *չորս շրջանավարտ՝* ուսուցիչներ **Սամսոն Դաղբաշյանը, Արաքսյա Գասպարյանը**, գրող **Սերո Խանզադյանը**, կուսակցական աշխատող **Դարչո Հովհաննիսյանը** արժանացել են Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման: *Խորհրդային Միության բարձրագույն՝ Լենինի շքանշանի են արժանացել ինը շրջանավարտներ* (պետական գործիչներ **Հայրապետ Հայրապետյանը, Շավարշ Սիմոնյանը**, ակադեմիկոս **Մկրտիչ Ներսիսյանը, Հրայր Անանյանը, Հրաչիկ Ղանդիլյանը, Արզուման Մանուկյանը, Վրույր Մարկոսյանը, Անուշավան Մարտիրոսյանը, Կարապետ Տողանյանը**):

Մեծ է համալսարանի շրջանավարտ գիտնականների ավանդը:

Երեք շրջանավարտ դարձել են ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ (**Արամ Ղանալանյան, Մկրտիչ Ներսիսյան, Շաքրո Մհոյան**), *վեց շրջանավարտ՝ ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամներ* (**Աշոտ Արսենի Աբրահամյան, Գուրգեն Թադևոսյան, Սիմոն Կրկյաշարյան, Մկրտիչ Մկրյան, Նորայր Քոչարյան, Ալիտա Դոլուխանյան**), *հարյուր տասնութ շրջանավարտ դարձել են գիտության դոկտոր-պրոֆեսորներ* (**Աշոտ Գարեգինի Աբրահամյան, Արծրուն Աբրահամյան, Մուշեղ Ադոնց, Վիգեն Ավագյան, Գեղամ Ավետիսյան, Սերգեյ Արզումանյան, Արամ Բալյան, Խիկար Բարսեղյան, Պետրոս Բեղիրյան, Հրաչյա Գաբրիելյան, Գեղամ Սևան, Գրիգոր Գրիգորյան, Կամսար Գրիգորյան, Ալմաստ Զաքարյան, Արամ Ինճիկյան, Ալեքսանդր Լալայան,**

Կլիմենտ Հարությունյան, Շմավոն Հարությունյան, Վաչագան Հովհաննիսյան, Վիգեն Ղազարյան, Կարապետ Ղաֆադարյան, Մկրտիչ Մազմանյան, Հովսեփ Թութունջյան, Հարություն Մկրտչյան, Արամայիս Մնացականյան, Աբգար Մովսիսյան, Գրիգոր Նազիկյան, Վլադիմիր Ներկարարյան, Լևոն Շահինյան, Կառլեն Ոսկանյան, Վարդան Պարսամյան, Արտաշես Պողոսյան, Հայկազ Պողոսյան (համալսարանի ռեկտոր), Մերոբ Պողոսյան, Պարույր Սահակյան, Սերգեյ Արզումանյան, Հրանտ Հակոբյան, Մնացական Մանուկյան, Յուրի Հարությունյան, Վլադիմիր Պետրոսյան, Վաչագան Սաղաթելյան, Սողոմոն Սողոմոնյան, Վաչե Պարտիզունի, Բոգդան Վերդյան, Աշոտ Տեր-Գրիգորյան, Կարապետ Քարամյան, Վաղարշակ Քոսյան, Շահեն Օհանջանյան, Էմմա Ալեքսանյան, Վերժինե Սվազլյան, Ռուզան Թադևոսյան, Կիմ Ղահրամանյան, Լալիկ Խաչատրյան, Սրբուհի Գևորգյան (համալսարանի ռեկտոր), Մհեր Կարապետյան, Սամվել Խուդոյան, Սուրեն Դանիելյան, Մարտին Գիլավյան, Տիգրան Թանգամյան, Լեմսիկ Ներսիսյան, Լաուրա Ասատրյան, Անուշավան Զաքարյան, Ջուլիետա Գյուլամիրյան, Շողիկ Ոսկանյան, Վլադիմիր Կարապետյան, Գագիկ Սուքիասյան, Կամո Վարդանյան, Կարեն Մաթևոսյան և ուրիշներ):

Քսաներկու շրջանավարտներ դարձել են գիտության թեկնածու-պրոֆեսորներ (Յուրի Ամիրջանյան, Միհրան Գամաղելյան, Էլդա Գրին, Համո Հարությունյան, Դավիթ Ղազարյան, Ռոզա Փաշինյան, Ալբերտ Նալչաջյան, Ալեքսանդր Ղուշչյան, Կարեն Գևորգյան, Գրավիկ Բաբայան, Արսեն Մինասյան, Արթուր Մարտիրոսյան, Հրանտ Պատրիկյան, Ավետիս Հարությունյան և ուրիշներ), *երկու շրջանավարտ՝ պրոֆեսոր* (Իլյա Մինասյան, Ֆրունզե Ելանյան, Արմեն Խաչատրյան):

Երեք հարյուր հիսուն շրջանավարտ դարձել են գիտության թեկնածու-դոցենտներ, այդ թվում **Աշոտ Փարեմուզյանը** (համալսարանի ռեկտոր):

Տասնյոթ շրջանավարտ դարձել են դոցենտներ:

Թվարկված շուրջ հինգ հարյուր շրջանավարտները տպագրել են ավելի քան 3000 գիրք /մենագրություն, դասագիրք, ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկ և այլն/:

Չորս հարյուրից ավելի շրջանավարտ նշանակվել է հանրակրթական դպրոցի տնօրեն:

Խորհրդային Հայաստանի, Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը բարձր են գնահատել ՀՊՄՀ շրջանավարտների գիտամանկավարժական գործունեությունը:

ՀՊՄՀ տասը շրջանավարտ արժանացել է երկրի բարձրագույն մրցանակների: *Մեկ շրջանավարտ արժանացել է ԽՍՀՄ պետական մրցանակի* (գրող **Հրանտ Մաթևոսյան**), *հինգ շրջանավարտ՝ ՀԽՍՀ պետական մրցանակի* (գրականագետ **Արամ Ինճիկյան,** գրողներ **Ռազմիկ Դավոյան, Հրանտ Մաթևոսյան, Մկրտիչ Սարգսյան, Սերո Խանզադյան**), *երեք շրջանավարտ՝ ՀՀ Պետական մրցանակի* (բանաստեղծ **Երվանդ Պետրոսյան, Հակոբ Մովսես,** պատմաբան **Արգամ Այվազյան,** ռեժիսոր **Հարություն Խաչատրյան**), *երկու շրջանավարտ՝ ՀՀ նախագահի մրցանակի* (գրող **Երվանդ Պետրոսյան, Հակոբ Մովսես**):

ՀՊՄՀ հարյուրտասնհինգ շրջանավարտ արժանացել է վաստակավորի կոչման:

Խորհրդային շրջան

Հայաստան

Քսաներկու շրջանավարտ արժանացել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի (ակադեմիկոսներ **Արամ**

Ղանալանյան, Մկրտիչ Ներսիսյան, Աշոտ Աբրահամյան, Գուրգեն Թադևոսյան, Մկրտիչ Մկրյան, Նորայր Քոչարյան, դոկտոր-պրոֆեսորներ **Ալեքսանդր Լալայան, Սուրեն Հակոբյան, Կարապետ Ղաֆադարյան, Մկրտիչ Մազմանյան, Հարություն Մկրտչյան, Աբգար Մովսիսյան, Վաչե Պարտիզունի, Համո Հարությունյան** և ուրիշներ), *տասնհինգ շրջանավարտ՝ ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի* (**Արազի Թիրաբյան, Խիկար Բարսեղյան, Էդուարդ Թոփչյան, Արշալույս Սարոյան, Աիդա Հայրապետյան, Սաղաթել Հարությունյան, Ղարիբ Եղիազարյան, Սերո Խանզադյան, Ռոբերտ Սահակյանց** և ուրիշներ), *քառասունհինգ շրջանավարտ ՀԽՍՀ վաստակավոր ուսուցչի* (դոկտոր-պրոֆեսոր **Պատվական Խաչատրյան**, պրոֆեսոր **Յուրի Ամիրջանյան**, գիտության թեկնածուներ **Վեռա Ամիրխանյան, Արսեն Մինասյան, Համբարձում Ոսկանյան,** դպրոցի տնօրեններ **Արտավազդ Աշոտյան, Դարչո Առաքելյան, Եզոր Բաբայան, Էլեոնորա Դալլաքյան, Մերժ Սաքանյան, Աշոտ Բելուբեկյան, Վաչիկ Դարբինյան, Արտաշես Խախանյան, Ցոլակ Մարգարյան, Անուշավան Մարտիրոսյան, Երջանիկ Հովեյան, Գեիմ Նիկողոսյան, Արամայիս Նալբանդյան, Մկրտիչ Մկրտչյան, Սաղաթել Մնեյան, Հայկ Մելքումյան, Միսիթար Միսիթարյան,** ուսուցիչներ **Արաքսյա Գասպարյան, Սամսոն Դաղբաշյան, Խաչիկ Ղազարյան, Սեդա Մովսիսյան,** գրող **Վարդգես Քալանթարյան** և ուրիշներ), *երեք շրջանավարտ՝ ՀԽՍՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործչի* (դոկտոր-պրոֆեսորներ **Հրաչյա Գաբրիելյան, Աշոտ Տեր-Գրիգորյան, Վաղարշակ Քոսյան**), *երեք շրջանավարտ ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավարի* (**Ադրինե Աբելյան, Մարիետա Հարությունյան, Ավետիք Օհանյան**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ ժողովրդական արտիստի* (**Բելա Հովնանյան**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ վաստակավոր արտիստի* (**Գևորգ Գևորգյան**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ վաստակավոր լրագրողի*

(**Սարդար Ամարիկե**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ սպորտի վաստակավոր աշխատողի* (**Օնիկ Վաթյան**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ վաստակավոր տնտեսագետի* (**Սերգեյ Կարապետյան**), *մեկ շրջանավարտ՝ ՀԽՍՀ վաստակավոր արտիստի* (**Իլյա Մինասյան**) *կոչման*:

ԽՍՀՄ

Մեկ շրջանավարտ արժանացել է *ԽՍՀՄ վաստակավոր ուսուցչի* (**Սեդրակ Դոխոլյան**), մեկ շրջանավարտ՝ *ԽՍՀՄ ժողովրդական ուսուցչի* (**Սամսոն Դաղբաշյան**), մեկ շրջանավարտ՝ *ԽՍՀՄ միլիցիայի վաստակավոր աշխատողի կոչման* (**Սիմոն Եղիազարյան**):

Վրացական ԽՍՀ

Մեկ շրջանավարտ արժանացել է *Վրացական ԽՍՀ վաստակավոր ուսուցչի* (**Սիմոն Անճելյան**), մեկ շրջանավարտ արժանացել է *Վրացական ԽՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման* (գրող **Բենիկ Սեյրանյան**):

Հայաստանի Հանրապետություն

Տասնմեկ շրջանավարտ արժանացել է *ՀՀ մշակույթի վաստակավոր գործչի* (ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ալլիտա Դոլուխանյան**, դոկտոր **Լեմսիկ Ներսիսյան**, **Տիգրան Հեքեքյան**, **Կարեն Գևորգյան, Գևորգ Թադևոսյան, Արգամ Այվազյան, Հասմիկ Կարապետյան, Հարություն Խաչատրյան, Սերոբ Սարգսյան**, **Տիգրան Նիկողոսյան, Ալիսա Ադամյան**), չորս շրջանավարտ՝ *ՀՀ վաստակավոր մանկավարժի* (ՀՀ ԿԱԻ տնօրեն **Նորայր Ղուկասյան**, դոկտոր **Հրանտ Հակոբյան**, պրոֆեսոր **Ալեքսանդր Ղուշչյան**, դպրոցի տնօրեն **Մարիետա Միրզոյան**), երկու շրջանավարտ՝ *ՀՀ վաստակավոր արտիստի* (**Արա Գևորգյան, Լեյլա Սարիբեկյան**), մեկ շրջանավարտ՝ *ՀՀ*

ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատողի կոչման (պրոֆեսոր **Հրանտ Պատրիկյան**):

Համալսարանի շրջանավարտները լուրջ ներդրում են ունեցել և ունեն երկրի մշակութային կյանքում: Բազմաթիվ գրողներ, լրագրողներ, գրադարանային աշխատողներ, գեղանկարիչներ, ռեժիսորներ, դերասաններ հայտնի են որպես մանկավարժականցիներ:

70-ց ավելի շրջանավարտ եղել է Հայաստանի գրողների միության անդամ: Նրանցից որոշները ներկայումս էլ միության անդամ են: Բավական է նշել Խորհրդային Միության սոցիալիստական աշխատանքի հերոս **Սերո Խանզադյանի**, հանճարեղ բանաստեղծ, հայրենապաշտ **Հովհաննես Շիրազի** (1935-1937 թվականներին սովորել և ավարտել է Գյումրիի մասնաճյուղի բանասիրական ֆակուլտետը), արձակագիրներ, բանասիրության դոկտորներ **Բոգդան Վերդյանի, Գեղամ Սևանի, Պատվական Խաչատրյանի, Ալիտա Դոլուխանյանի, Սուրեն Դանիելյանի**, բանաստեղծ-արձակագիր **Մկրտիչ Սարգսյանի**, **Արշալույս Սարոյանի, Սասուն Գրիգորյանի, Վարդգես Քալանթարյանի**, դրամատուրգ **Գրիգոր Տեր-Գրիգորյանի** (Գիգի), պետական և այլ մրցանակների դափնեկիրներ **Հրանտ Մաթևոսյանի, Արամայիս Սահակյանի, Ռազմիկ Դավոյանի, Երվանդ Պետրոսյանի, Դավիթ Հովհաննեսի, Արամայիս Սահակյանի, Հակոբ Մովսեսի, Բենիկ Մեյրանյանի, Վրեժ Սարուխանյանի** անունները, որպեսզի պարզ դառնա մեր գրական միջավայրում համալսարանի ներդրումը:

Քառասունհինգ շրջանավարտ տարբեր տարիների անդամագրվել են Հայաստանի լրագրողների, այժմ նաև այլ միջազգային լրագրողական կազմակերպությունների: Եղել են «Սովետական Հայաստան» և այլ թերթերի խմբագիրներ, պատասխանատու աշխատողներ (**Գոռ Ղազարյան, Սուրեն Մուրադխանյան, Հովհաննես Պապիկյան, Նորիկ Պետրոսյան,**

Շուշանիկ Աբրահամյան, Ստեփան Զաքարյան, Ռուզան Արշակյան, Վարդգես Բաբայան և ուրիշներ):

Կուլտուրայի ֆակուլտետի գրադարանային և տեղեկատվական բաժնի 250-ից ավելի շրջանավարտներ ներկայում աշխատում են հանրապետության գրադարանային համակարգում՝ զբաղեցնելով բավականին բարձր պաշտոններ: Երկար տարիներ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական վարչությունն է ղեկավարել **Ներսես Հայրապետյանը** (ներկայում էլ աշխատում է նույն տեղում), Ավետիք Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանի տնօրեն է **Հասմիկ Կարապետյանը**, ՀՀ Ազգային ժողովի գրադարանի տնօրեն է **Ֆաթմա Խաչատրյանը**, Ջերմուկի քաղաքային գրադարանի տնօրեն է արձակագիր **Զինաիդա Սիմոնյանը**, բուհական գիտական գրադարանների տնօրեններ են **Մարիամ Հարությունյանը, Արմինե Հովհաննիսյանը**: Հանրային ու շրջանային գրադարանային կառույցներ են ղեկավարել **Իզաբելլա Հովհաննիսյանը, Շուշանիկ Նալբանդյանը, Լիդա Ալեքսանյանը, Ժաննա Գևորգյանը, Քնարիկ Գրիգորյանը, Ելիզավետա Երեմյանը, Քրիստինե Զատիկյանը, Ռոզա Լևոնյանը, Սիրվարդ Զաքարյանը** և ուրիշներ:

Հայտնի նկարիչներ են գիտության դոկտոր **Լեմսիկ Ներսիսյանը**, պրոֆեսորներ **Սարգիս Թերզյանը, Արթուր Մարտիրոսյանը**, վաստակավոր նկարիչ **Ղարիբ Եղիազարյանը** (եղել է մշակույթի քոլեջի տնօրեն), գիտության թեկնածու, դոցենտ **Սամվել Կարապետյանը**, **Հրանտ Թադևոսյանը**, **Անդրանիկ Մխիթարյանը**, աբստրակտ նատուրալիզմի հիմնադիր, լոնդոնաբնակ նկարիչ **Արթուր Օշականցին**, ամերիկաբնակ նկարիչ **Դավիթ Միրզոյանը**, դասախոսներ **Սոս Հարությունյանը, Նիկոլ Աղաբաբյանը,** քանդակագործ **Աղվան Մխիթարյանը**: Նրանց գիտեն նաև Հայաստանից դուրս կազմակերպված բազմաթիվ ցուցահանդեսներից:

Երաժշտական մշակույթի բնագավառում հայտնի անուններ են Կոմիտասի անվան կոնսերվատորիայի նախկին պրոռեկտոր, պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանը**, ՀՊՄՀ ամբիոնի վարիչ **Արա Գևորգյանը**, Հայաստանի մանկական երգչախմբի հիմնադիր-ղեկավար, պրոֆեսոր, երաժշտական դպրոցի տնօրեն **Տիգրան Հեքեքյանը**, պարուսույց **Կարեն Գևորգյանը**, բալետի պարուհի **Բելա Հովհաննիսյանը**, երգչուհի **Լեյլա Սարիբեկյանը**:

Կինոյի աշխարհում ճանաչված դեմքեր են «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիր **Հարություն Խաչատրյանը**, մուլտիպլիկացիոն կինոյի վարպետ **Ռոբերտ Սահակյանցը**, ռեժիսորներ **Դավիթ Համբարձումյանը, Ժիրայր Դադասյանը, Նարինե Մալյանը, Խաչիկ Մարգարյանը**:

Հայաստանի սպորտային փառքի տարածողներ են եղել 1977 թվականին ՀՊՄՀ պատմության ֆակուլտետի շրջանավարտներ, միջազգային կարգի սպորտի վարպետներ, թենիսիստներ **Էլմիրա Անտոնյանը** (1973 թ-ի աշխարհի առաջնության երկրորդ մրցանակակիր), **Բագրատ Բուռնազյանը** (1973 թ-ի աշխարհի առաջնության երրորդ մրցանակակիր), ըմբշամարտիկ, միջազգային բարձրագույն կարգի մրցավար **Սամվել Հարությունյանը**:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ
Գրող, հրապարակախոս
1969 թ. շրջանավարտ

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ՈՒՂԵԿԻՑՍ

Հիմա համալսարան է կոչվում իմ սիրելի մանկավարժական ինստիտուտը, ուր ես հետաքրքիր, անմոռաց չորս տարիներ ունեցա 1965-69 թվականներին:

Համալսարանի «Հայագիտական հանդես»-ում նորերս կարդացի համալսարանի օրհներգի տեքստը, որ հեղինակել է Մարտին Գիլավյանը: Ուրախացա, որ իմ սիրելի բուհն ունի իր օրհներգը: Մեր ժամանակ չկար այն,–ավարտական տարվա վերջին մենք հավաքվում էինք Քանաքեռում գտնվող Խաչատուր Աբովյանի տուն թանգարանում, Ուսուցչապետին մի տեսակ «հաշվետվություն» էինք տալիս, որ պատվով կկատարենք ուսուցչի աստվածահաճո առաքելությունը: Եվ հիմա, երբ տասնամյակներ են անցել մեր ուսանողական տարիներից, և իմ հարազատ ինստիտուտն էլ արդեն համալսարան անվանումով նշում է իր ստեղծման փառավոր 100-ամյակը, ես մտովի վերադառնում եմ մեր երդման օրվա տպավորությանը և մտովի կրկնում եմ այսօրվա օրհներգի խոսքերը, որոնք այնպես գեղեցիկ արտահայտում են մեր երդման օրերի տրամադրությունը.

«*Դու մայր տաճար մեր դպրության,*
Դու մեր երթի փարոս մի նոր,
Ճամփան ես մեր լուսավոր
Աբովյանից մինչ այսօր»:

Այո, մեր երթի իսկական փարոս էր 1990-ականների մանկավարժական ինստիտուտը: և մեր դասախոսնե՛րը… Ի՛նչ ակնածանքով եմ հիշում նրանց, ովքեր մեր ուսանելու բոլոր տարիներին օրհնեցին մեր սլացքի ուղին, մեզ ճանաչելի

դարձրին գեղեցիկն ու բարին, ուսանեցին կյանքի դժվարություններով անվարան անցնել: Նրանք նվիրյալ էին իրենց գործին և գիտելիքից զատ մեզ տվեցին մարդկային հարաբերություններում ճիշտ պահվածք ունենալու վարպետություն: Իսկ դա ապագա ուսուցիչների համար չափազանց կարևոր է, որովհետև ինքնուրույն աշխատանքում մենք տարբեր բնավորությունների տեր աշակերտների ու նաև նրանց ծնողների հետ էինք գործ ունենալու:

Մարդու կյանքում միշտ լինում է մեկը, ով իր բարի, անկաշառ վերաբերմունքով անջիջ հետք է թողնում հիշողությանդ մեջ: Մանկավարժական ինստիտուտ իմ մուտքը պսակվեց այդպիսի մի անջինջ տպավորությամբ՝ շնորհիվ Պետրոս Բեդիրյանի: Ես ծանոթ չէի սփյուռքի Մելքոնյան վարժարանն ավարտած, հայրենադարձ այդ հրաշալի բնավորության տեր լեզվաբանին, ով հայրենադարձվելով Հայրենիքում զբաղվել էր հայոց լեզվի պահպանման ու զարգացման խնդիրներով, հայոց լեզվին նվիրված բազում գրքեր հեղինակել ու դոկտոր, պրոֆեսորի պատվավոր տիտղոսով վաստակել էր մանկավարժական ինստիտուտի ուսանողության սերն ու համակրանքը: Ահա, որեմն, այդ պատվելի մարդը ստուգում է դիմորդ Հովհաննես Պապիկյանի գրած «Մեր բակը» ազատ թեմայով շարադրությունը և… 6 տառասխալի առկայության դեպքում անգամ գնահատում է դրական: Իրեն անծանոթ այդ դիմորդի շարադրանքը որպես գրական ակնարկ համարելով՝ Բեդիրյանը շարադրությունը ներկայացնում է դեկանատ և ասում.

-Այս հրաշալի շարադրության հեղինակը Կարնո բարբառի ազդեցության տակ է, և նրա թողած տառասխալները ստվեր չեն գցում շարադրության բովանդակության վրա: Նա եթե ոչ լավ ուսուցիչ, հաստատ լավ լրագրող դառնալու հայտ է ներկայացնում:

Բեդիրյանը կարող էր, չէ՞, 6 տառասխալ ունեցող շարադրության մասին մոռանալ և անծանոթ հեղինակի հետագա ճակատագրով էլ չհետաքրքրվել: Բայց իր այդ մարդկային վերաբերմունքով ճակատագիր նախանշեց, չէ՞: Եվ եթե այն ժամանակվա դիրոդ Հովհաննես Պապիկյանը հետագայում լրագրության ասպարեզում իր որոշակ տեղն ու դերն ունեցավ՝ աշխատելով հանրային ռադիոյում ու հեռուստատեսությունում և այսօր հրապարակախոսական 14 գրքի և վավերագրական 10 ֆիլմերի հեղինակ է, (խնդրում եմ՝ ինքնագովություն չհամարվի)-պարտական է մնում Պետրոս Բեդիրյանի այն տարիների հայրական վերաբերմունքին:

Ահա այսօր արդեն իր ստեղծման 100-ամյակը նշող մանկավարժական համալսարանի առաջ իմ խոնարհումի առիթն ու անջինջ տպավորության գեղեցիկ դրվագներից ամենանկատելին:

Եվ պիտի հիշեմ նաև «Մանկական գրականության» դասախոս, երանելի Սոֆիկ Լալախանյանին, ով դասախոսելուց զատ տարբեր միջոցառումներ էր նախաձեռնում, որ ուսանողներս անմիջական շփումներ ունենայինք արդեն ճանաչում ունեցող գրողների հետ: Դրանցից մեկի մասին հանգամանորեն պիտի պատմեմ, որովհետև մանկավարականում իմ ուսանած տարիների աստեղային պահերից էր:

Ուսանողական տարիներին ես թղթակցում էի «Ավանգարդ» թերթին, և Լալախանյանը հավանում էր իմ հոդվածները: Գուցե դրանից էր, որ մեր կուրսից հատկապես ինձ ասաց.

-Ահա քեզ գրող Խաժակ Գյուլնազարյանի «Օրերի ճանապարհը» գիրքը: Կարդա և գրախոսական գրիր: Գյուլնազարյանին կհրավիրենք ձեր կուրսի հետ հանդիպման, և դու հանդես կգաս գրախոսականով:

Ես մի քիչ զգուշացա, բայցև ուրախացա այդ վստահության համար:

-Չփորձես կարդալ Գյուլնազարյանի գրական գործերի մասին որևէ գրախոսական,-զգուշացրեց Լալախանյանը,-այն կխանգարի քեզ, ինքդ կարդա գիրքը և գրիր այն, ինչ զգում ես:

Գյուլնազարյանն արդեն հայտնի գրող էր, իմ կյանքում էլ առաջին դեպքն էր, որ պիտի գիրք գրախոսեի:

Ներկարացնեմ: Եկավ գրողը, մեծ լսարանում կուրսեցիներից բացի նաև դասախոսներ կային: Ինձ ամբիոնի մոտ հրավիրող Լալախանյանի խրախուսական ժպիտն ինձ ոգևորեց, և ես ընթերցեցի մեքենագիր 11 էջանոց իմ զեկուցումը: Ծափահարություններ, և Գյուլնազարյանի խոսքը (չեմ մեծամտանում, նա տառացիորեն հենց այսպես ասաց).

-Իմ գրքերը հայտնի գրականագետների կողմից գրախոսելու առիթներ շատ են եղել, շատ գրախոսողներ եմ ունեցել, ինձ, որպես գրողի, բնութագրումներ էլ շատ են եղել, բայց խոստովանեմ՝ այսքան անմիջական, այսքան անկեղծ խոսք և այսքան դիպուկ բնութագրում, գրքիս էությունն այսպես ճշմարիտ ներկայացնող խոսք առաջին անգամ եմ լսում: Ես շատ հուզված եմ և շատ զգացված, - և հուզված գրողը համբուրեց ամբոնի մոտ կանգնած, գրողից տասնապատիկ հուզված զեկուցողիս: Աշխարհն ինձ էին տվել-առաջին լուրջ քայլը, ջերմ գովեստներ:

…Հիմա Խաժակ Գյուլնազարյանն արդեն 100 տարեկանի սահմանն անցել է, և Երկնային հեռուներից, գուցե թե նրա հոգին զգում է իմ այսօրվա զգացումը, տեսնում է այս վերհուշից եկած իմ շիկնելը, իմ այսօրվա ջերմությունն իր հանդեպ, որ բարի հիշողություն է, գեղեցիկ տպավորությունների արտահայտում:

Իմ սիրելի բուհը նման գեղեցիկ ու անմոռաց դրվագներ շատ պարգևեց ինձ, և լրագրության մեջ ինչ-որ չափով իմ

նկատելի լինելը ես պայմանավորում եմ իմ սիրելի մանկավարժականում ուսանելուս տարիներով:

Նախկին ուսանողի ակնածանքով ու ջերմությամբ շնորհավորում եմ միշտ ջահել մանկավարժական համալ-սարանի փառավոր հոբելյանը: Խաչատուր Աբովյանի Ոգու զորությունն է այնտեղ, որով լցված ու ոգեպնդված ուսուցիչներ են համալրում մեր դպրոցները: Բարի երթ նրանց աստվածահաճո առաքելությանը:

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետ
Մագիստրատուրա 1-ին կուրս

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԻՍԱՆԴՐՈՒ ԱՌՋԵՎ

Տարիներ են անցել. ծանրումեծ հիշողությունների կծիկը եկել բազմել է, ու թվում է, թե հուշը թել է հյուսել, բայց անմահ լուսավորչի՝ Խաչատուր Աբովյանի ժողովրդասիրության, անհուն հայրենասիրության պատգամը այսօր, առավել քան երբևէ, ուղենշային է. «Մենք պետք է մտածենք գլխավորապես այս երկրի մատաղ սերնդի մասին»: Հարյուրամյա բուհը, սիրելի՜ Աբովյան, իմ հայրենակիցնե՜ր, այս մեծ պատգամը հայտնի ճշմարտության կերպարանքով կամուրջ է դարձրել, պատվանդան, որի վրա կանգնում է արարող, լույսին ձգտող, ականատես ու ականջալուր հայը...

Մեկդարյա պատմություն ունեցող բուհը հետամուտ է՝ ուսանողների քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը, ինքնադրսևորման խթանմանը, հոգևոր, գեղագիտական, աշխատանքային, ֆիզիկական, իրավական, էկոլոգիական դաստիարակմանը, դպրոցը՝ որպես ազգի հարատևման ոգի բարձր պահելուն, աշխատանքային կարևոր ուղղություններից մեկը պրակտիկայի կազմակերպումը համարելուն, «365 օր դպրոցում՝ ուսուցչի և աշակերտի կողքին» նշանաբանով գործելուն, տարաբնույթ միջոցառումներ կազմակերպելուն, ներբուհական թերթում սիրով, սիրով, սիրով անհամար հիշողություններն ամփոփելու ավանդույթին...

Սիրելի՜ Աբովյան, երջանկությանս զգացողությունը ավելի տարողունակ է դառնում, երբ հիշում եմ դասավարումները դպրոց-արվեստանոց անունը կրող իմ աշխարհում... Միշտ էլ նահանջում ենք հիշողությունների դաշտում ու կարոտում.

կարոտեցի այդ տաք անկյունը, ուր դասավարելու հնարավորություն ունեցա, ուր պատասխանատվությունս ավելի կրկնապատկվեց, հասկացա, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել: Այն, ինչ ուղղակի պատկերացրել եմ, իրականությանը մոտ էր, շատ մոտ ու շոշափելի, մնում էր գիտելիքների հարուստ պաշարով, պատրաստված ձեռք զարկել ամենաէականին...Կարմիր ու տաք սիրտ ունենալու զգացողությունը պարուրեց ինձ, երբ փորձում էի պրակտիկայի ընթացքում ապրածս, լսածս ու սովորածս թղթին հանձնել:

Աշակերտները վերլուծում էին, սեփական կարծիք ձևավորում ցանկացած հարցի շուրջ ու վերջում հանգում ճշմարտության՝ չգերագնահատելով կամ թերագնահատելով երևույթը. նպատակը կյանքի է կոչված: Հետաքրքրությունը մեր շուրջն անսահման էր. մտնում ես դասարան, ու արդեն բոլորի հայացքները քոնն են, դու՝ իրենց արտացոլած պատկերում. նպատակը կյանքի է կոչված:

Սիրելի՜ Աբովյան, ինձ համար հարազատ դարձած բանասիրական ֆակուլտետը իր ուսանողների մեջ սերմանում է հայ գրականության ու լեզվի մշտարթուն պահապանը լինելու պատասխանատվությունը, հավատ է ներշնչում, որ ուսանողներս կարող ենք վառ օրինակ դառնալ շատերի համար մեր ամենօրյա տքնաջան կրթությամբ ու գործունեությամբ, մանկավարժի ու մարդու նկարագրով: Մեր ֆակուլտետի ուսանողների սիրտն էլ բաբախում է հետաքրքրության և ոգևորության դաշտում. չէ՞ որ իրենք բուհի առանձնահատուկ ու արարող կարգավիճակում են…

Սիրելի ու թանկ կրթօջախը իր սանի շուրթերով հիմա ջանում է բառերով ամփոփել այն, ինչ հոգու խորքում է իրականության ճշգրիտ մատուցմամբ, հարյուրամյա հարուստ պատմություն ունենալու գիտակցմամբ: Անվերջ արարելու, առաջ շարժվելու ու նորը կառուցելու, սեփական լեզվի ու

մշակույթի մշտարթուն պահապանը լինելու, հոգաչափ նվիրվելու, հար ու հավերժ հետագիծ թողնելու իրավունքով ու հաստատակամությամբ շարունակե՛ք ձեր կյանքի ուղին, աբովյանականնե՛ր...

Մենք անուղղելի լավատես ենք սիրո ու հարգանքի, հպարտության զգացումներով. մի-մի Աբովյան ունենք բուհի՝ հարազատ դարձած պատերի ներսում, երգում ենք մեզ բնորոշ, մեզ արտահայտող իսկական մի բան՝ մերը...

Սերն ու երախտագիտական բառերը համասփյուռ են, բոլորի շուրթերին… Եվ իմ խոնավ աչքերից հորդում է շնորհակալության հեղեղը...

Խոնարհումով...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
Մեկդարյա պատմությանն ընդառաջ **5**

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ
Բարի երթ քո լուսավոր առաքելությանը **7**

ՄԱՐՏԻՆ ԳԻԼԱՎՅԱՆ
Ապրած օրերը դառնում են
հուշեր ու չեն մոռացվում **9**

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ
Հօգուտ ուսանողի **13**

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ
Մանկավարժականը և ես. հուշադրվագներ **16**

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ
Կրթական մայր դարբնոցի առաջին
դժուարին հարիւր քայլերը **23**

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի
երազանքի իրականացումը **27**

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Մանկավարժության դարբնոցի 100-ամյակը **30**

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Մանկավարժականը՝ նաև հայագիտական կենտրոն **34**

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի նշանավոր շրջանավարտները **37**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ
Հարյուրամյա ուղեկիցս **58**

ԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ
Մտորումներ Մեծ Լուսավորչի կիսանդրու առջև **63**